

ԱՂԱՋԱՆՅԱՆ Խ.Ա.
ԱՂԱՋԱՆՅԱՆ Զ.Խ.

**ՀԱՅԵՐԵՆԻ
ՀԱԿԱՆԻՇՆԵՐԻ
ՀԱՄԱՌՈՏ
ԲԱՌԱՐԱՆ**

**ԱՂԱՋԱՆՅԱՆ Խ.Ա.
ԱՂԱՋԱՆՅԱՆ Ձ.Խ.**

ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱԿԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԲԱՒԱՐԱՆ

**Տպագրվում է Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի
հայոց լեզվի ամբիոնի որոշմամբ**

Խմբագիրներ Մ. Բեժանյան, Դ. Պետրոսյան

Հովանավոր Մուշեղ Վարուժանի Ղազարյան

Բառարանն ընդգրկում է հայերենի առավել գործածական շուրջ
չորս հազար հականիշ բառեր ու հականիշ դարձվածքներ:
Բառակազմական, իմաստային, քերականական հատկանիշներով
բնորոշվող հականիշների իմացությունը նպաստում է զարգացնելու և
հարստացնելու խոսքը այն դարձնելով պարզ ու պատկերավոր,
մատչելի ու տպավորիչ:

Նախատեսված է ընթերցող լայն շրջանների համար:

Հականիշները (հուն. anti-հակառակ+anoma-անուն, ռուս. антонимы =դեմ, ընդդեմ, հակ+անուն) արտասանական- հնչյունական կազմով տարբեր, իմաստով հակադիր բառերն են: Բառիմաստային հակադրություն ունեն հայերենի ոչ բոլոր բառերը¹: Որոշակի առարկա մատնանշողները (աթոռ, սեղան, բաժակ), հատուկ անունները, թվականները, դերանունների, կապերի, շաղկապների, ծայնարկությունների, եղանակավորող բառերի գերակշռող մասը հականիշներ չունեն: Հականիշությունը բնորոշ է հատկանիշ ցույց տվող բառերին: Բնականորեն, հականիշները գերազանցապես արտահայտվում են ածականով (*տխուր-ուրախ*) և բայով (*ծռել-ուղղել*): Որոշակի քանակ են կազմում մակբայական (*երբեմն-հաճախ*) և գոյականական (*լաց-ծիծաղ*) հականիշները: Հազվադեպ են մյուս խոսքի մասերով ձևավորված հականիշները (*ոչինչ-ամեն ինչ, վրա-տակ, այո-ոչ, ըստ-հակառակ*):

Անշուշտ, հաղորդակցվելիս մարդիկ հաճախ են դիմում նաև հակադրությունների օգտվելով և՛ հիմնական ու երկրորդական ձևությներից, բառերից, և՛ դարձվածքներից ու նախադասություններից: Բառարանում ընդգրկված են *ձևույթ-ձևույթ, բառ-բառ (իսմ-հակ, ընդհատ-անընդհատ, ժամանել-մեկնել)*, *բառ-բառակապակցություն (դարձվածք) (միշտ-իշի զատկին)*, *բառակապակցություն (դարձվածք)-բառ (մազերը փետտել-ուրախանալ)*, *դարձվածք-դարձվածք (կապը քաշել-սանձը թողնել)*, *նախադասություն-նախադասություն (կուռք չորանակուռ դալարի)* կաղապարներով կերտված հականիշության խմբերը: Դարձվածքների հականիշները երբեմն տրվում են ազատ բառակապակցություններով ու հարադիրներով (*շուն թակելով ապրել-հանգիստ առանց չարչարանքի ապրել; ոտքի փռելիս համբուրել- անհնազանդ լինել*):

Համանիշ դարձվածքները տրված են // նշանով (*ոտը կտրել// ոտը խաղաղվել*): Ձախ և աջ թևերի հոմանիշները տրոհված են ստորակետով, բութով (*իյուսել, ոլորել-քանդել, ետ տալ; ցամաք աչքով ապրել (լաց՝ դժբախտություն՝ սուգ չտեսնել)*: Երբեմն բացատրվում են անծանոթ բառերը (*պատիր (=սուտ, կեղծ)-անպատիր (=անկեղծ, ազնիվ)*: Երկու թևերի միջև նշանակված գիծը (-) պետք է կարդալ «հականիշն է» կամ «հականիշներն են»:

1. Հայերենի հականիշները քանակով զգալապես զիջում են հոմանիշներին, համանուններն էլ՝ հականիշներին:

Բառարանում ընդգրկված են հականիշ բառեր և հականիշ դարձվածքներ:

ա) **Հականիշ բառերը** լինում են տարարմատ (տարահիմք) և համարմատ (նույնահիմք): Տարարմատ հականիշները տարբեր արմատներ ունեն (*զվարթ-տխուր, թրջել-չորացնել, ստրուկ-տեր*), համարմատ հականիշները միևնույն արմատները (*արտազաղթ-ներգաղթ, զգուշ-անզգուշ*): Համարմատ հականիշները ձևավորվում են իմաստաբանական որոշակի արժեք ունեցող հականիշ նախածանցներով *արտ-ներ, գեր-թեր, համ-հակ, վեր-ստոր, բաց-ներ, գեր-ստոր, համ-տար, ընդ-վեր* (արտամղել-ներմղել, գերակատարել-թերակատարել, գերադասել-ստորադասել, ընդգետնյա-վերգետնյա և այլն):

- *Վոր,- ուն,- կոտ,- ոտ,-իկ,- ին,- ուվի,- ու* վերջածանցները հատկապես *ան-*ժխտական նախածանցի հետ զտնվում են հականիշային հարաբերության մեջ և սովորաբար ցույց են տալիս ունեցողի-չունեցողի, օժտված լինելու-օժտված չլինելու հարաբերություն (*ողնաշարավոր-անողնաշար, երերուն-աներեր, գիտուն-անգետ, սահուն-անսահ, ամպոտ-անամպ, թափանցիկ-անթափանց, վախկոտ-անվախ, կարգին-անկարգ, աշառու-անաշառ*): *Ան-*նախածանցով և վերը նշված վերջածանցներն ունեցող բառերով կազմված հականիշներում այդ վերջածանցներն ընկնում են: Սխալ կազմություններ են *ողնաշարավոր-անողնաշարավոր, թափանցիկ-անթափանցիկ* և այլն: **Հաջվադեպ** են վերջածանցավոր ձևի պահպանման օրինակները (*վերջավոր-անվերջավոր*):

Տարբեր խոսքի մասերով արտահայտված տարբեր բնույթի բառերը հականիշներ չեն: *Բախտ-անբախտ, շունչ-անշունչ, կիրք-անկիրք, վախ-անվախ* զույգերը հականիշներ չեն, քանի որ առաջին թևի բառերը գոյականներ են, երկրորդ թևի բառերը ածականներ: *Բախտավոր-անբախտ, շնչավոր-անշունչ, կրքոտ-անկիրք, վախկոտ-անվախ* զույգերը հականիշներ են. դրանք արտահայտված են միևնույն խոսքի մասով:

*Ան-*ժխտական նախածանցը զգալապես կենսունակ է *անորոշ դերբայ+ի* կաղապարով բայական հականիշներ կազմելու մեջ (*իմանալի-անիմանալի, ըմբռնելի-անըմբռնելի*):

Գոյականաբար առնված ածական հականիշները կարող են կրել գոյականին բնորոշ փոփոխությունները (*կարծր-երկարը, կարծի-եր-*

2. *Կան նաև ան+գոյական, ան+ածական կաղապարներով հականիշներ (խոհենություն-անխոհենություն, նպատակային-աննպատակային):*

կարի, կարծից-երկարից, կարծերին-երկարներին և այլն): Եթե հականիշները բայեր են, ապա կարող են ստանալ անդեմ և դիմավոր բայերի խոնարհման բոլոր ձևերը (*հեշտանալ-դժվարանալ, հեշտացող-դժվարացող, հեշտացավ-դժվարացավ, կհեշտանա-կդժվարանա, պիտի հեշտանա-պիտի դժվարանա* և այլն):

Բառարանում, որպես կանոն, հականիշային զույգը տրված է մեկական բառով: Հաշվի առնելով հայերենի բառերի բազմիմաստությունը, նրանց ուղղակի և փոխաբերական նշանակությունը, ինչպես ծախ, այնպես էլ աջ թևում երբեմն նշվում են նաև հականիշների համանիշությունը, համանունությունը, փոխաբերական իմաստները (*բաց-փակ, գոց, ժածուկ; աշխատել (գործ անել)-հանգստանալ; աշխատել (վաստակել)-մսխել*):

Հականիշ բառերը լինում են հակադրական և ժխտական: **Հակադրական** հականիշներն արտահայտում են միմյանց հակադիր հակառակ իմաստ (*մանր-խոշոր*): «Ժխտական են այն հականիշները, որոնցից մեկը ժխտում, բացասում է մյուսի ցույց տված հատկանիշի առկայությունը, բայց ցույց չի տալիս ուղղակի հակադրությունը, բևեռայնորեն հակառակը» (Է.Աղայան): *Ազատ-անազատ* զույգի առաջին բառը դրական բևեռն է, երկրորդը ներկայացնում է այդ հատկանիշի բացակայությունը և ոչ թե առաջինին բևեռապես հակադիր հատկանիշ: Ժխտական հատկանիշը կարող է փոխարինվել *ոչ* ժխտականով կամ զուրկ, չունեցող բառերի հետ (*անազատ-ոչ ազատ, անթև-թև չունեցող, թևից զուրկ*) և այլն: Բառարանում ընդգրկված բառերը կամ հակադրական են, կամ ժխտական: Ի դեպ, չմասնիկով նոր հականիշ բառեր կամ նոր հականիշ դարձվածքներ չեն կազմվում: *խոսել-չխոսել, սևը սպիտակից ջուկել-սևը սպիտակից չջուկել* զույգերի ժխտականները անկախ, տարբեր բառեր ու դարձվածքներ չեն: Դրանք միևնույն բառի կամ դարձվածքի դրական և ժխտական տարբերակները կամ խոնարհման ձևերն են:

բ) Տեղի, տարածական, չափի, ժամանակային, ծավալային, մարդկային հոգեկան և այլ իմաստներ արտահայտող բառ-հականիշներից բացի բառարանն իր մեջ ամփոփում է նաև *հականիշ դարձվածքներ*: Դրանք պատրաստի, անքակտելի լեզվական միավորներ են, յուրատեսակ կառույցներ և ունեն այլաբերական-փոխաբերական իմաստ: Հականիշ դարձվածքները նպաստում են բանավոր ու գրավոր խոսքի պատկերավորությանը, արտահայտչականությանը և լայնորեն կիրառ-

վում են հաղորդակցվելիս: Այդ նպատակով խոսքի վարպետները ոչ սակավ դեպքերում հակադրության հենքով մարմին են տալիս իրենց խոհերին՝ երբեմն հորինվածքների վերնագրերում օգտագործելով հականիշ բառեր ու հականիշ դարձվածքներ («խելոքն ու հիմարը», «Քուն թե արթուն...», «Հեյ ազահ մարդ, հեյ անգոհ մարդ, միտքըդ երկար, կյանքըդ կարճ» (Հ.Թումանյան), «Դու գնացիր,- ես մնացի», «Շատ մի՛ տխրիր, շատ մի՛ խնդար, սիրելիս» (Ավ.Իսահակյան), «Ես չգիտեմ խնդա՞մ, թե լամ», «Թող էլ ո՛չ ոք ճիշտս ու շեղս չիմանար», «Ծիծաղեցի, թե լացի», «Այս աշխարհի ցավն ու խիճող» (Ս.Կապուտիկյան), «Երես ու աստառ» (Պ.Սևակ) և այլն):

Հականիշ դարձվածքները դրսևորվում են համանման և տարանման կառուցվածքներով: Համանման կառուցվածք ունեցող դարձվածքում հականիշությունը տրվում է նրա կազմում եղած հականիշ բառերով (*ծեռքը բաց-ծեռքը փակ, հանգիստը գտնել-հանգիստը կորցնել*): Տարանման կառուցվածքի դեպքում հականիշությունն այլ կերպ է արտահայտվում՝ բաղադրիչների ընդհանուր իմաստով (*երկու քայլի վրա-յոթ սարի ետև*):

Ըստ բաղադրիչների քանակի՝ հականիշ դարձվածքները լինում են երկանդամ (ծալ(ք)ը պակաս-խելքը գլխին) և բազմանդամ (*քունը աչքերին գալ-քունը աչքերից փախչել*): Հականիշ դարձվածքների գերակշռող մասը երկանդամ է: Սակավ են գոյականական և ածականական հականիշ դարձվածքները (*կյանքի արշալույս-կյանքի մայրամուտ, խիղճը մաքուր-խիղճը կեղտոտ*): Հայերենն առատ է բայական հականիշ դարձվածքներով (*ժամանակի հետ քայլել-ժամանակից ետ մնալ, խոզ կտրել-կաշին ու ոսկորը մնալ*):

Զգալի թվով բայական դարձվածքներ կարող են փոփոխվել, խոնարհվել բայի եղանակներով ու ժամանակներով, ունենալ անդեմ և դիմավոր ձևեր (դրական և ժխտական): Օրինակ՝ «խոսքը գետին գցել» դարձվածքը հնարավոր է գործածել բայի խոնարհման հարացույցի բոլոր ձևերով (*խոսքը գետին գցող, խոսքը գետին գցեց, խոսքը գետին կգցի, խոսքը գետին պիտի գցի, խոսքը գետին չի գցի* և այլն):

Բառարանում երբեմն-երբեմն ծախ ու աջ թևերի դարձվածքները մեկնաբանվում են: Ոչ մի բացատրություն չի տրվում, եթե դարձվածքի իմաստը հանրածանոթ է: Հենց ծանոթ, հասկանալի լինելուց ելնելով՝ հազվադեպ բացատրվում է միայն մեկ թևի (ծախ կամ աջ) դարձվածքը:

Դարձվածքների գործածության շնորհիվ խոսքը դառնում է պատ-

կերավոր, հուզական: Այդպես չեն հնչում բառ-համարժեքները (հմտ. «Կյանքի թելը կտրվել-մեռնել» և «Բախտի դռները բացվել-հաջողության հանդիպել» զույգերը): Երբ հականիշ դարձվածքի մի թևը ոչ թե դարձվածքով է տրված, այլ համարժեք բառով, ապա ոչ միայն արտահայտչականությունն է թուլանում, այլև որոշ դեպքերում համարժեք հականիշ բառերը լիովին չեն փոխարինում մյուս թևի հականիշային բովանդակությանը:

Դարձվածքի արժեք ունեն առածներն ու ասացվածքները, որոնք պատրաստի խոսք են, միտք են արտահայտում, շարահյուսորեն վերլուծելի են, ունեն հաղորդակցական արժեք: Դրանց բովանդակությունը հնարավոր չէ փոխարինել մեկ բառով: Գերազանցապես պարզ կամ միավորյալ նախադասություններ են (նաև բարդ): Հատկապես առած-ասացվածքների հականիշությունը յուրահատուկ ձևավորում ունի: Հակադրվում են դրանց երկու թևերը, որոնք սովորաբար համադաս նախադասություններ են, կարող են տրոհվել գերազանցապես *խկ, բայց* ներհակական շաղկապներով կամ շարահարությանը: Բաղադրիչ մասերը (բևեռները) առանձին վերցրած հականիշային հարաբերություն չեն արտահայտում: Ասացվածք-դարձվածքի ընդհանուր՝ ինքնակա իմաստը մեկն է: «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանում» կան «Դառը դատել» (դժվար աշխատանք կատարել) և «Դատարկ նստել» (ծեռնունայն զուրկ մնալ) դարձվածքները: «Դառը դատել՝ դատարկ նստել» դարձվածքի բովանդակությունը մեկն է՝ դժվար աշխատանք թափել, բայց իր վաստակածի տերը չլինել: Կամ ցայտուն հակադրություն է ցույց տալիս «Երեսից քսեման տակից սատանա», «Դրսից հայելի ներսից ածելի» ասացվածքներից յուրաքանչյուրը: Երկուսն էլ ունեն միևնույն իմաստը՝ «Իրեն ազնիվ ու հարազատ ցույց տվող, իրականում նենգ, խորամանկ, վնասակար»:

Այսպիսի շատ դարձվածքներ սովորաբար չեն ունենում իրենց հականիշները: Իրենց կառուցվածքով նախադասություններին համարժեք ասացվածք-դարձվածքների բաղադրիչ մասերից մեկի բովանդակությունն ամբողջովին կամ մասամբ հակադրվում, ժխտվում է մյուսով: Հականիշությունը ձևավորվում է բաղադրիչների դրական և ժխտական խոնարհման բայերի կամ էլ համադաս կապակցությունների հականիշ բառերի օգնությամբ:

Ահա՝ այդպիսի կառուցվածք ունեցող ասացվածք-դարձվածքներ ~~միավոր~~ հականիշ հակիրճ, դիպուկ, պատկերավոր իմաստներ ունեն

որոնք քաղված են Ա. Ղանալանյանի «Հայկական առածանիից»
(Երևան, 1951).

Աղջկա գեշը չը տեսանք, հարսի լավը:

Անբանը հաց ուտելիս առողջ է, բանելիս հիվանդ:

Առնողը գտնում է, ծախողը կորցնում:

Աստված հալալին կուտա, հարամինը կը տանի:

Բարեկամ կա սրտի, բարեկամ էլ կա փորի:

Գիժ աղջիկը խելոք հարս կը լինի, գիժ հարսը խելոք կին:

Գիտունին մեկ, անգետին հազար:

Գլուխդ պաղ պահե. ոտներդ տաք:

Գլուխը հաստ, ծուծը բարակ:

Գողնողը մեկ մեղք է անում, կորցնողը հազար:

Եկավ փաշի պես, գնաց բոշի պես:

Ընկել ա փողատերը, կանգնել ա տղատերը:

Թե հարուստ ես աչքիս վրա, թե աղքատ ես քաշվի գնա:

Թրի կտրածը կլավանա, լեզվի կտրածը չի լավանա:

Լավ է գիտունին գերի, քան անգետին սիրելի:

Լավ է կույր աչքով, քան կույր մտքով:

Լեզուն մեղր, սիրտը լեղի:

Խոսքը մեծին, ջուրը պուճուրին:

Ծախողի մեկ աչքը բավ է, առնողին հազարն ալ քիչ է:

Ծուռ նստինք շիտակ խոսինք:

Կապրի գրկվողը, չի ապրի գրկողը:

Հազար կը մեռնի մեկ չի շվարի, մեկը մեռնի հազար կը շվարի:

Հալալ մազը չի կտրվի, հարամ գերանը կը կտրվի:

Հարուստը մեռնի աշխարհ թնդա, աղքատը մեռնի մարդ չիմանա:

Սոր գովածը թող ու փախի, դրկցին գովածը առ ու փախի:

Սերը սովորը կուտի, թանը մոլորը:

Վուրին ավար, վուրին խավար:

Տերավորին տերն ա տարե, անտերին գելը:

Քիչ խոսիր, շատ լսիր:

Փործված թանը լավ ա, քանց անփործ մածունը:

Ինչպես երևում է, բերված ասացվածքների հիմքում ընկած են լավ-վատ, առողջ-հիվանդ, գտնել-կորցնել, հալալ-հարամ, շատ-քիչ, խելոք-գիժ, հեշտ-դժվար, գիտուն-անգետ, բարակ-հաստ, մեկ-հազար և այլ զույգերի հակադիր իմաստները: Իրոք, նշված առած-ասացվածք-

ները յուրահատուկ կառույցներ ունեցող հակամիշ. դարձվածքներ են, հակադրության ու համեմատության հիմքով ձևավորված և իրենց ներսում հակամիշություն արտահայտող ներհակամիշային դարձվածքներ:

Յուրօրինակ դարձվածքներ են նաև անեծքները, հիշոց-հայհոյանքները և օրինանք-բարենադթանքները, փաղաքշանքները: Դրանք, որպես ուղղակի խոսքեր, արտահայտում են մարդկային վատ վնասակար, կամ լավ օգտավետ արարքները: Մի կողմում խոսողն է (անիծողը, օրհնողը), մյուս կողմում դիմացինը, խոսակիցը (անիծվողը, օրհնվողը):

Բառարանում կան այդպիսի կառույց ունեցող հակամիշներ: Ահա մի փունջ էլ ազգագրագետ Ս. Հարությունյանի «Անեծքի և օրինանքի ժանրը հայ բանահյուսության մեջ» ուսումնասիրությունից առանց մեկնաբանությունների.

Աստոծ. հացդ կտրի-աստված հացդ տանիցդ անպակաս անե:

Արնոտ շապիկդ գա-էն ծաղկանց նման ծաղկիս:

Արևդ թաղեն-ապրի արևդ:

Մուրազդ փորդ մնա-բարով մուրազիդ հաանեա//աղեկ բախտի ռաստ գաս:

Չհասնիս կենճուրն (երիտասարդության)-սաղ ջանով պառվես:

Չորեչոր օխտը սրբի դուռ էրթաս, էլի մուրազդ չառնես-լավ օրեր ու արև շատ տեսնես:

Պեժինքդ (օժիտ) կապած մնա-կարմիր խարս էրթաս:

Վրիցդ քոսը չպակասի-գեշ օր չը տխմաս:

Տակոիքդ (արմատ) չորանա-որդով, գավակով ուրախմաս:

Տանդ կուկուն բուն դնի-աստուծ քո օջախը հաստատ պահե:

Տունդ բըրըշակ (ավերակ) մնա-օջախիդ մուխն ու ծուխը անպակաս ընի:

Տունդ կրակ ընկնի, բալեքդ քուլ (մոխիր) դառնա-շեն օջախդ շեն մնա, որքան դու կուգես:

Տունդ վրեդ քանդվի-տունդ շեն մնա:

Բազմազան են հակամիշների յուրացմանը նպաստող աշխատանքների ձևերը:

Ա. Համախ տարարմատ (նաև համարմատ) հակամիշ բառերը (մեծ մասամբ ածականական) ճյուղավորվում են և ձևավորվում այլ հակամիշ գոյգեր (բայական, գոյականական, մակբայական): Սակայն միշտ չէ,

որ հնարավոր կազմությունները նշվում են բառարանում: Անհրաժեշտ է բառարանից օգտվողները դրանք գտնեն ինքնուրույնաբար: Այսպես կարելի է կռահել և, ասենք, *չար-բարի, չարություն-բարություն* զույգերին սովելացնել *չարանալ-բարիանալ, չարացնել-բարիացնել, չարացում-բարիացում* հականիշները:

Բ. Գտնել առանձնացված բառերի հականիշները, բացատրել դրանց իմաստները, ուղղագրությունը, դրանցով կազմել նախադասություններ:

գ. Հականիշ դարձվածքները փոխարինել հականիշ բառերով և հակառակը:

դ. Գեղարվեստական երկերից քաղել հակառակ իմաստներ, հակադիր վիճակներ և մտքերի հականիշություն պարունակող նախադասություններ, հատվածներ:

Վերջին առաջադրանքի վերաբերյալ բնագրային նմուշներ.

1. Երկու ընպանակ ունի ձեռքերում,
Մեկն արյունով լի, մյուսը կաթով.
Երկու բուրվառներ կայծակնացնցուղ,
Մեկը խնկաբույր, մեկը ճենճահուտ.
Անոթներ, երկու համեմունք կրող,
Մեկը քաղցրություն, մեկը դառնություն...

(Գ.Նալբեկյացի)

- 2 - Մեկն ի պապանց պարոնորդի,
Մեկն ի հարանց մուրող լինի.
Մեկին հազար ծի և ջորի,
Մեկին ոչ ուլ մի, ոչ մաքի.
Մեկին հազար դեկան ոսկի,
Մեկին ոչ փող մի պղնձի.
Մեկին բեհեզ և ծիրանի,
Մեկին բրդե շալ մի չանկնի.
Մեկին հարամըն յաջողի,
Մեկին հալալն կորուսի...
- Անգեւոն է ի հուր նման,
Ուր ընկնի գտեղն կու էրէ.
Գիտուն է ի ջուր նման,
Ուր երթայ կանաչ բուսեր է:

(Ճրդիկ)

3. - Հորս ծեռին կարճ ու երկար, հաստ ու բարակ մի փետ կար, երեսն առավ, նշան դրեց, մին էլ տրափք, որ կրակեց...

- Տեր աստված, արդարն ու մեղավորը դու գիտես: Եթե էս մարդը մեղավոր է, ինձ ուժ տուր, որ մի զարկով թոցնեմ նրա գլուխը, իսկ եթե արդար է, թող փայտ դառնա իմ թուրը:

(Հովհ.Թումանյան)

4. - Ես շատ սիրեցի իմ ընկերներին, և բոլոր մարդկանց մոտիկ ու հեռու:

- Այդ քաղցր թույնը, որով արբողը ստրուկ է դառնում և կամ բռնակալ:

- Ողջույն չէր վերցնում, ողջույն չէր տալիս անցնող ու դարձող քաղաքացիներին:

- Ոչ ոք չի լսել սկիզբը նըրա, և չի լսելու վախճանը նըրա...

- Նորից սկսվում և վերջանում է ամեն մի մարդու կյանքի հետ մեկտեղ:

- Ի՞նչ է օրենքը,- մարդկանցից օրհնած, բիրտ ուժեղների այդ սուրը դաժան,

Անգորի գլխին կախված հավիտյան, խեղճին խողխողող, հզորին պաշտպան:

- Ապիրատ աշխարհ, ուր հզոր ոսկին դարձնում է գողին ազնիվ բարեհույս ,

Ապուշին հանճար, վախկոտին կտրիճ, տգեղին չքնաղ և պոռնիկին կույս:

- Ատում են ես աշխարհի չարն ու բարին, պարտքն ու վարձքը, լավն ու վատը:

- Անհամար թշնամին եկավ հարավից և հյուսիսից, արևելքից ու արևմուտքից...

(Ավ.Իսահակյան)

Այսպիսի վարժություններ, պրպտումներ կատարելով աշակերտները, դիմորդները, շատերը հեշտությամբ հարյուրավոր նոր հակամիշներ կգտնեն և ստեղծագործական, որոնողական ու տրամաբանական նպատակադիր գործողությունների շնորհիվ կճոխացնեն, արտահայտիչ կդարձնեն իրենց և՛ բանավոր, և՛ գրավոր խոսքը:

Այս հակիրճ պարզաբանումներն էլ կօգնեն լավագույնս օգտվելու բառարանից:

Օգտագործված գրականություն

Աբրահամյան Ս., Հայոց լեզու, բառ և խոսք, 2-րդ հրատ., Երևան, 1986:

Акопян А., Русско-армянский школьный словарь антонимов,
Ереван, 1988.

Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976:

Բաղիկյան Խ., Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները,
Երևան, 1986:

Բեդիրյան Պ., Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն,
Երևան, 1973:

Գևորգյան Ե. Հայերենի դարձվածքները, Երևան, 1969:

Սարգսյան Ա., Հայոց լեզվի հականիշները, Երևան, 1987:

Սարգսյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1990:

Մուրվալյան Ա., Հայոց լեզվի դարձվածաբանություն և
բայակազմություն, Երևան, 1959:

Շալունց Ռ., Հականիշ դարձվածքները ժամանակակից հայերենում,
«Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», 1978, թիվ 2:

Շալունց Ռ., Հականիշ բառերը ժամանակակից հայերենում, Երևան,
1979:

Ռուս- հայերեն դարձվածաբանական բառարան, Ռ.Մելիքյանի և
Պ.Պողոսյանի խմբագրությամբ, Երևան, 1975:

Սուքիասյան Ա., Գալստյան Ս., Հայոց լեզվի դարձվածաբանական
բառարան, Երևան, 1975:

Աս

Աբրահամի գառ (հեզ, բարի, միամիտ մարդ)-սատանայի ճղատ
(անհնազանդ, չար, խորամանկ, խաբեբա)

ազռավի ճանկ (անվարժ տգեղ գիր)-մարգարտաշար (գեղեցիկ
վայելուչ գիր)

ազռավի ճուտ (տգեղ, այլանդակ)-սիրամարգ (գեղեցիկ, հաճելի)

ադաթից ընկնել (սովորույթը մոռանալ)-ադաթի փեշից կախվել

Ադամի եզ (ծուլ անհոգ մարդ)-գործը անելով, էշը քշելով

Ադամի տարվանից (հին ժամանակներից)-նորերս, վերջերս

ազատ-1. ճնշված, հալածված, գերի, 2. սեղմ, զբաղված

ազատարար-ճնշող, հարստահարող, բռնակալ

ազատ արծակել-գերեվարել, գերի տանել, գերի վերցնել

ազատ զգալ-կաշկանդվել

ազատագրում-նվաճում, ճնշում, կեղեքում

ազատություն, անկախություն-գերություն, մահ, ստրկություն

ազգային-ապագային, հակազգային

ազգայնական-հակազգայնական

ազգայնացում-ապագայնացում

ազգասեր-ազատյաց, ազգուրաց

ազգասիրություն-ազգատեցություն, ազգուրացություն

ազդակ-հակազդակ

ազդել- հակազդել

ազդեցիկ-անազդեցիկ

ազդեցություն-հակազդեցություն

ազդիչ-հակազդիչ

ազդում-հակազդում

ազնիվ, անկեղծ, ուղղամիտ-անազնիվ, կեղծավոր, նեմգամիտ

ազնվաբար-անազնվաբար, խորամանկորեն

ազնվորեն-անազնվորեն

ազնվություն-անազնվություն, ստորություն

ալիք տալ (ալեկոծվել)-մեղմանալ, հանդարտվել

ալյուրը մաղել մաղը կախել (վերջացնել)-շարունակել

ախորժ-անախորժ

ախորժակը բավարարել (պահանջները կատարել)-ախորժակը կտրել

ախորժակը բացել-ախորժակը փակել

ախորժակը զրգռել-ախորժակը զսպել (հափշտակելու ցանկությունից ետ կանգնեցնել, սանձել)

ախորժելի, դուրեկան, հաճելի-անախորժելի, տհաճ, անդուր
ախտավոր-անախտ, ախտագերծ, առողջ
ածելի լիզել (խիզախելի՞նել)-վախկոտ անհամարձակ լինել
ածուխ (=մարգի) պատի վրա կենալ (շատ քաջ անվախ լինել)-վախկոտ երկչոտ լինել

ականապատել-ականագերծել

ականապատում-ականագերծում

ականջը բամբակ դնել (չլսել)-ականջը բանալ//լսողությունը լարել
ականջը կախ (սպասողական վիճակում, հեզ, հնազանդ)-անուշադիր, անհնազանդ

ականջի բուրդը (բամբակը) հանել (ուշադիր լսել)-ականջում բուրդ դնել

ականջի ետև գցել//մինդարի բարձի տակ դնել (չլսելու տալ, քաշքշուկի հասցնել)-խոսքը բանի տեղ դնել (լսել և չմոռանալ)

ականջին հասնել (լսվել, լսելի լինել)-ականջին թաղիք կապել
ականջին օղ անել (միշտ հիշել)-մտքից հանել, արհամարհել
ականջի տակ (շատ մոտ)-շատ հեռու

ականջից բռնած բերել (գոռով բերել)-կամովին բերել

ականջ ծակող (սուր)-բութ, թույլ և 'ցածր' (ձայն)

ականջները սրել//ականջները չորս անել (լսողությունը լարել, ուշադիր լսել)-ականջները փակել

ականջները փակ (անտարբեր)-ուշադիր

ականջներից խեղճ (խուլ, լավ չլսող)-ականջը սուր

ականջ չունենալ (չլսել)-լսել, լսելու ունակություն ունենալ

ակնկալ (=ակնկալվող, սպասվող)-անակնկալ

ակնկալություն-անակնկալություն

ակնհայտ-թաքուն, ծածուկ, գաղտնի

ակտիվանալ-պասիվանալ, ոչ գործուն դառնալ

ահ առնել (երկյուղել)-չվախենալ, չզարհուրել

ահել-ջահել

ահելություն-ջահելություն

ահ ու դող (երկյուղ)-անվախություն, համարձակություն

աղավարի ապրել (անհոգ և ունևոր կյանք վայելել)-յուլա գնալ, քարշ գալ, աղքատ կյանքով ապրել

աղքաւորը տանել, ծարավ ետ բերել (իննաբազետ ճարպիկ լինել .

խաբէլ)-ապիկար անկարող միամիտ լինել

աղեկ-գեշ, վատ, տգէտ

աղը հանել/հանը հանել (չափը անցնել)-չափը ճանաչել իմանալ .

չափի մեջ մնալ

աղը չոր լինել (որևէ բանի կարոտ չլինել)-ապահով կյանքից կարոտ լինել

աղի-անաղի, անալի

աղին ու անալին իրարից չջուկել (անգետ լինել)-բանիմաց լինել

աղի պէս հալվել (անոթից կարմրել)-անամոթ լինել, չամաչել

աղի ու լեղի (դառն, դժոխակ)-քաղցր

աղմուկ-անդդող, անդդորութիւն, լռութիւն

աղոթած էշ (մոլորված, շփոթված, անճարակ)-զգոն, աշխույժ

աղոթարանը բացվել (լուսանալ)-մութը ընկնել, մթնել

աղոտ-անաղի, անալի

աղոտ-վառ, պայծառ, պարզ, բացահայտ

աղվոր-տգէտ, վատ, գեշ

աղտոտ-մաքուր

աղտոտել,մաքրել

աղտոտութիւն-մաքրութիւն

աղուհացը հալալ լինի-աղուհացը հարամ լինի

դիմ աղուհացը մոռանալ (երախտամոռ լինել)-աղուհացը հիշել,

երախտապարտ լինել

աղուհացին քոռ մտիկ անել-երախտապարտ լինել

աղուհացից կուրացած (ապերախտ)-երախտագետ

աղ ու հացով (հյուրասեր)-անաղուհաց, անհյուրասեր

աղքատ-հարուստ, ունևոր, ճոխ, մեծատուն

աղքատանալ-հարստանալ

աղքատութիւն-հարստութիւն

ամաչկոտ, անոթխած-անպատկառ, անամոթ

ամառ-ձմեռ

ամառնամուտ-ձմեռնամուտ

ամբողջ-մաս, կոտորակ

ամբողջովին-մասամբ

ամբողջությամբ-մաս-մաս

ամեն բան յուր անունով կոչել (ճշմարտությունը պարզ ասել, չամաչել)-
 կեղծավորել, կեղծել, խեղաթյուրել
 ամեն ինչ-ոչինչ
 ամեն մեկը-ոչ մեկը
 ամեն մի-ոչ մի
 ամեն ոք-ոչ ոք
 ամենուր (եք)-ոչ մի տեղ
 ամենքը-ոչ ոք
 ամոթխած-անամոթ
 ամոթ ունենալ (պատկառել)-պատկառանքից զուրկ լինել
 ամոք (=մեղմ, խաղաղ)-անամոք, անհաճգիստ, տհաճ
 ամպել-պարզել, արևել
 ամպոտ-անամպ, պարզ, ջինջ
 ամրակազմ-թուլակազմ
 ամրանալ-թուլանալ, փափկանալ
 ամրապնդվել-թուլանալ, տկարանալ
 ամրացնել-թուլացնել, փափկացնել
 անուսնանալ-անուսնալուծվել, բաժանվել
 անուսնացած-անուրի
 անուսնություն-անուսնալուծություն, ապահարզան
 անուր-ամուր-թույլ-թույլ
 անուր, պինդ-թույլ, խախտու, ոչ դիմացկուն, փռվող
 անուր կաղին (դժվար հաղթահարելի)-դյուրանալի, հեշտ
 հաղթահարելի (բան)
 անուր հիմքի վրա կանգնել (հուսալի հաստատուն երաշխիք ունենալ)-
 ոտքի տակի հողը կորչել
 անփոփ-ցրիվ, ցիրուցան
 անփոփել-ցրել, տարածել, պարզել
 այգաբաց, ադամանոթ-մթնշաղ
 այգեբաց (մեքենա)-այգեբաղ (մեքենա)
 այլ-նույն
 այլասեր-եսասեր, եսամոլ, անձնամոլ, եսապաշտ
 այլասիրական-եսասիրական
 այլասիրություն-եսասիրություն
 այլտեղային-տեղական
 այծերը գալ (չարությունը բռնել)-այծերը գնալ

այո (հա)-ոչ (չէ)
 այոն այո է, ոչը ոչ//խոսքի տերն է (հաստատամիտ է, համառ է)-խոսքի
 տերը չէ
 այս աշխարհից չլինել (անտեղյակ լինել)-սատանայից յոթ օր շուտ
 ծնվել
 այս խնորը դեռ շատ ջուր կվերցնի-պարզ է, անվիճելի է
 այստեղից-այնտեղից
 այստեղ մի բայց կա (հանգամանքները պարզ չեն)-ամեն ինչ պարզ է,
 բացահայտ է
 այսօր-երեկ, վաղը
 այսօր կա, վաղը չկա (անցողիկ է)-մշտնջենական է, անմահ է
 այրող հարց (հրատապ խնդիր)-երկրորդական անկարևոր խնդիր
 այրվել, վառվել-մարել, հանգչել
 անազնվաբար, խորամանկորեն-ազնվաբար
 անազնվորեն-ազնվորեն
 անախորժ-ախորժելի, հաճելի
 անախորժակ-ախորժակով, ախորժալուր
 անամպ-ամպամած, մառախլապատ
 անանձնասեր-անձնասեր, եսասեր
 անանցանելի-անցանելի
 անառակ որդի-բարի ծնողներին հնազանդ որդի
 անատամ-ատամնավոր
 անարգանքի սյուհին գամել (խստորեն դատապարտել, նշավակել,
 պախարակել)-դրվատել, փառաբանել
 անարի- արի, քաջ
 անարև-արևոտ
 անբախտ-բախտավոր
 անբան անասուն (ծուլ՝ ապիկար մարդ)-բանող՝ աշխատասեր մարդ
 անբեղ-բեղավոր
 անգետ-գիտուն
 անգթանալ-գթոտ դառնալ, գութ ունենալ, կարեկցել
 անգույն-գունավոր
 անդանակ մորթել (կործանել, նեղել, տանջել)-փրկել, ազատել
 անդեն-դիմավոր
 անդրանիկ-կրտսեր
 անդուր-դուրեկան

անելանելի-ելանելի
անեծք-օրհնանք
անեծք թափել (անիծել)-օրհնել
անեծք քեզ, չար սատանա (բարկության բացականչություն)-փառք
քեզ, աստված
անգեն-զինված
անգեն աչքով (առանց օպտիկական սարքի օգնության)-զինված աչքով
անգոր-զորեղ, իզոր
անընդհատ-ընդհատ
անընդհատ-երբեք
անթաղ մեռել (գերեզման չունեցող)-շիրիմ ունեցող
անթև, թևատ-թևավոր
անիծել-օրհնել
անխելք-խելացի
անխռով լռություն-աղմուկ, իրարանցում
անկախ-կախյալ
անկեղծ, շիտակ-ծածկամիտ, կեղծավոր, կեղծ
անկեղծություն-կեղծավորություն
անկյունի ավել դառնալ (միշտ տանը նստել)-դրսի մարդ լինել
անկյունի ետևից (թաքուն)-անդավադիր, բացահայտորեն
անկողին ընկնել (հիվանդանալ)- ոտքի կանգնել, ապաքինվել
անկոչ հյուր (աներես այցելու)-հրավիրված ցանկալի հյուր
անկտրել ծներուկ (չփորձված)-ներքին լուքյամբ բնավորությամբ
հայտնի մարդ
անհամ-համել
անհամ-անհամ դուրս տալ (անիմաստ ոչ տեղին անհետաքրքիր
բաներ ասել, շատախոսել, բարբաջել)-կարևոր տեղին բաներ ասել
անհայտանալ-հայտնվել
անհայտության քողով ծածկված (չպարզաբանված, մութ մնացած)-
միանգամայն հայտնի, պարզաբանված
անհանգիստ-խաղաղ, հանգիստ
անհաս-հասուն
անհաս-հասանելի
անհատական-համայնական
անհետանալ-ի հայտ գալ
անհիշաչար-հիշաչար

անհոգ-հոգատար
 անհող-հողառատ, հողատեր
 անհոտ-հոտավետ
 անհոտ ծաղիկ (ապաշնորհ՝ ոչ մի բանի պետք չեկող մարդ)-շնորհալի
 պիտանի մարդ
 անհրաժեշտաբար-պատահաբար
 անհրաժեշտորեն-պատահականորեն
 անհրաժեշտություն-պատահականություն
 անհուն-հունավոր, սահմանափակ, չափավոր
 անհուն ցեցի տեր (մեծահարուստ)-աղքատ
 անձեռակերտ-ձեռակերտ, ոչ բնական
 անձրև ուտել (անձրևից թրջվել)-անձրևի տակ չընկնել
 անմասն-մասնակից
 անմեղ-մեղավոր
 անմիջաբար-միջնորդաբար
 աննշան-նշանակալից
 աննպաստ-նպաստավոր
 անշեշտ-շեշտավոր
 անշջահայաց-շրջահայաց, հաշվենկատ (մարդ)
 անշունչ-շնչավոր
 անշուշտ-բնավ
 անոթի-կուշտ
 անող-դնող-ծուլ, անաշխատասեր
 անոսր-թանձր, խիտ
 անոսրանալ-թանձրանալ, խտանալ
 անոսրություն-թանձրություն, խտություն
 անորոշություն-որոշակիություն
 անջատ-անանջատ, կից, միասին
 անջատել-միացնել, կցել
 անվանը մուր քսել (անարգել)-անունը բարձրացնել, գովաբանել
 անվանի-անունով անհայտ, քչերին հայտնի
 անվավեր-վավեր (=վստահելի, օրինական ուժ ունեցող)
 անվճար-վճարովի
 անտակ ծով (առատ, անչափ շատ)-շատ քիչ, սակավ
 անտակ փոր (անհագ, անկուշտ)-քչակեր, սակավակեր
 անտառոտ-անտառագուրկ, անանտառ

անցած,անցյալ, նախորդ-գալիք, եկող
 անցյալ(ը)-ներկա(ն)
 անցնել-դառնալ
 անցողական-անանցողական
 անցողիկ-մնայուն
 անունը աշխարհով մեկ անել (մեկին հռչակել)-աշխարհով մեկ անունը
 զգել, անունը ջնջել
 անունը գետնով տալ (վարկաբեկել, արատավորել)-անունը
 փառավորել
 անունը թնդալ-խայտառակվել
 անունը կոտրել (հեղինակազրկել, պատվազրկել)-անունը բարձրացնել
 անունը չտալ-անունը հիշատակել, հիշել ցանկանալ
 անունը ցեխի մեջ զգել (խայտառակել)-անունը ցեխից հանել
 (խայտառակությունից փրկել)
 անունով երդվել (շատ հարգել)-ատել, արհամարհել
 անուն վաստակել-համբավից զրկվել, անվանազրկվել
 անուշ-դառը, լեղի
 անուշահոտ-գարշահոտ
 անուշահոտություն-գարշահոտություն
 անուշություն-դառնություն, լեղիություն
 անփայլ-փայլուն
 անփորձ-փորձված
 անփորձ աչք-հմուտ, փորձառություն ունեցող
 անփչել վայր ընկնել (տկար լինել)-ուժեղ առողջ լինել
 անփուտ-փտած
 աշխատանք-պարապուրդ
 աշխատանքը ջուրը զգել (ծեռք բերածը փչացնել)-ծեռք բերածը
 պահպանել
 աշխատասեր, ջանասեր-ծուլ, ալարկոտ, անաշխատասեր
 աշխատասիրություն- ծուկություն
 աշխատել (գործ անել)-պարապ մնալ
 աշխատել (վաստակել)-մսխել, վատնել
 աշխատունակ-անաշխատունակ
 աշխարհ գալ (ծնվել)-աշխարհից գնալ (մեռնել)
 աշխարհը բռնել գնալ (շատ երկար ապրել)-կանաչ տերևից ընկնել
 (կարճ ապրել)

աշխարհը իրենը լինել-դժբախտության հանդիպել
 աշխարհի աչք (երևելի)-ատելի, չսիրված
 աշխարհի ծայրը (հեռավոր տեղ)-մոտիկ տեղ, մարդկանց մոտ
 աշխարհիկ-հոգևոր, եկեղեցական
 աշխարհի չափ (անչափ շատ)-չափավոր, քիչ
 աշխարհից կտրված (առանձնացած)-մարդամեջ մտած
 աշխարհից կուշտ (կյանք վայելած, լիացած)-աշխարհին կարոտ
 (կյանքի վայելքներից չօգտված)
 աշխարհ մտած (ամուսնացած)-չոր գլուխ (չամուսնացած, մեն-մենակ,
 ցանձ-անհնազանդ)
 աշխարհով մեկ (ամենուր)-ոչ մի տեղ
 աշխարհով մեկ լինել (շատ ուրախանալ, բերկրել, հրճվել)-շատ տխրել
 տրտմել, ներանձնանալ, անձկանալ
 աչառու-անաչառ
 աչքաթող անել (անուշադրության մատնել)-աչքից չփախցնել, կողքով
 չանցնել
 աչքախաբ լինել (ճիշտը չտեսնել)-տեսածը ճիշտ ընկալել
 աչքերը բացել (արթնանալ, միամտությունից ելնել, տեսնել)-աչքերը
 փակել (քնել, չտեսնել)
 աչքերին քունը գալ (քունը տանել, մոռնել)-աչքերից քունը փախչել
 աչքը դռանը (ամուսնական ուխտին չդավաճանող)-աչքը դուրս(ը)
 աչքը լիանալ (կշտանալ, ներքուստ հագեցնալ)-աչքը վրան մնալ
 աչքը ծանր (չար)-աչքը բարի (բարեբեր, անվնաս)
 աչքը կուշտ (լիացած, բավարարված)-աչքը ծակ (ազահ)
 աչքը մտնել (սիրելի դառնալ)-աչքից ընկնել
 աչքի գրող//աչքի փուշ (ատելի)-աչքի լույս (շատ սիրելի)
 աչքի ընկնել (ճանաչվել, ուշադրություն գրավել)-ստվերում մնալ,
 չնկատվել
 աչքի լույս դարձնել-աչքից օգնել
 աչք չկացնել (ամենևին չքնել, անուշադիր չլինել)-աչք փակել (քնել,
 չտեսնել)
 աչքի տակով (ծածուկ, գաղտնի)-բացահայտ
 աչքից ընկնել (չհարգվել)-աչքում բարձրանալ
 աչքից ու երեսից ընկած (արհամարհված, վարկը կորցրած)-
 հարգարժան, հարգված

աչքն ու ունքը երեսին խաղացող (շարժ ու ձևի մեջ ազատ,
 քեթևաբարո)-զուսպ, պարկեշտ, բարոյական
 աչքով-ունքով (գեղեցկադեմ)-տգեղադեմ
 աչքուն ընկնել (հեղինակությունը վարկը կորցնել)-վարկը գտնել,
 հարգելի դառնալ
 աչքուն մազ կանաչել (շատ չարչարվել, երկար սպասել)-հանգիստ
 անհոգ լինել
 ապա-մախ
 ապական-անապակ, անապական
 ապահով-անապահով
 ապացույց-հերքում
 ապացուցել-հերքել
 ապացուցում-հերքում
 ապրել-մեռնել, վախճանվել, սատկել
 ապրեցնել-մեռցնել, սատկեցնել, սպանել
 ապուշ-հանճար, խելացի
 ապօրինի-օրինական
 աջ-ձախ, ախյակ
 աջակողմ-ձախակողմ
 աջակողմյան-ձախակողմյան
 աջափնյա-ձախափնյա
 աջթևյան-ձախթևյան
 աջլիկ-ձախլիկ
 աջ ու ձախ նայել (զգուշանալ)-անշրջահայաց լինել
 առանց այլևայլի (հանկարծ, առանց կշռադատելու)-հիմնավոր
 կերպով, մտածված
 առանց աչք թարթելու (առանց տատանվելու)-երկնտելով, երկնտորեն
 առանց ետ նայելու (խսկույն)-ուշացնելով, հապաղելով
 առանց երկար ու բարակ մտածելու (առանց բանի էության մեջ
 խորանալու)-ծանր ու թեթև անելով
 առանց կոպեկի նստել (փող չունենալ)-դրամ ունենալ
 առանց մազը ծռվելու (բարեհաջող, անվնաս)-վնաս կրելով,
 կորուստով, անհաջող
 առաջ-ետ, հետո
 առաջ-վերջ, վերջում
 առաջաբան-վերջաբան

առաջադաս-վերջադաս, ետադաս
առաջադեմ, առաջավոր-հետադեմ, հետամնաց
առաջադիմական-հետադիմական
առաջադիմել-հետադիմել, հետ մնալ
առաջադիմություն-հետադիմություն, հետամնացություն
առաջ անցնել-ետ ընկնել
առաջանցում-հետանցում
առաջապահ-վերջապահ
առաջացնել-ոչնչացնել
առաջ բերել-ետ տանել
առաջ գնալ (զարգանալ, առաջադիմել)-հետադիմել
առաջը կտրել (խոչընդոտել)-ճանապարհի հարթել (բարենպաստ
պայմաններ ստեղծել)
առաջընթաց-ետընթաց
առաջը քար գցել (խանգարել)-խոչընդոտները վերացնել
առաջին-վերջին, ետին
առաջինը հավասարների մեջ (ամենամշանավոր)-ամնշան,
երկրորդական
առաջին պլան դուրս գալ (կարևորություն ստանալ)-հետին պլան մղվել
առաջ խաղալ (առաջ ընթանալ)-ետ գնալ, հետադիմել
առաջնագիր-վերջնագիր
առաջնակարգ, հիմնական-երկրորդական
առաջնամաս-ետնամաս
առաջնային-երկրորդային
առաջնեկ-վերջ(ի)նեկ
առաջ տանել-ետ բերել
առաջ քաշել (մեկի պաշտոնը բարձրացնել)-պաշտոնագրկել,
պաշտոնը ցածրացնել, ետ քաշել
առաստաղ սևացնող (տուն ու տեղ դնող)-վատնող, թափառական
առավելագույն, մեծագույն-նվազագույն, փոքրագույն
առավել-առնվազն
առավելություն-պակասություն, թերություն
առավոտյան-երեկոյան
առատ-սակավ, քիչ, պակաս, սուղ, աղքատ
առատաբեր-սակավաբեր
առատաբուխ-սակավաբուխ

առատածեռն-ծեռքը գրպանից խռով (ժլատ)
 առատանալ-պակասել, սակավանալ, քչանալ, աղքատանալ
 առատություն-սակավություն, պակասություն, կարիք, աղքատություն
 առաքինի-արատավոր, անառակ, անբարոյական
 առաքնություն-անառակություն, արատավորություն
 առկա-բացակա, հեռակա
 առկայություն-բացակայություն
 առյուծի սիրտ ունենալ (խիզախ քաջ լինել)-նապաստանի գորտի
 սիրտ ունենալ
 առնականորեն-կանացիաբար, կնաբար
 առնականություն-կանացիություն
 առնել-ծախել, վաճառել, տալ, ետ տալ
 առնելիք-ծախելիք, տալիք
 առնովի-ծախու
 առողջ-հիվանդ, անառողջ, տկար
 առողջաբեր-հիվանդաբեր
 առողջամիտ-հիվանդամիտ, տկարամիտ
 առողջանալ-հիվանդանալ, տկարանալ
 առողջ-առողջ-հիվանդ-հիվանդ
 առողջարան-հիվանդանոց
 առողջարար-հիվանդարար, հիվանդաբեր
 առողջացնել-հիվանդացնել
 առողջություն-հիվանդություն, ախտ
 առ ոչինչ համարել (նշանակություն չտալ)-բանի տեղ դնել
 առջև-ետև
 առջևանց-ետևանց, հետևանց
 առջևից-ետևից
 առջևում-ետևում
 առ ու թառ լինել (ցիրուցան լինել)-ի մի գալ, խմբվել
 առույգ, աշխույժ-թույլ, թոշնած, հիվանդոտ, խոնջացած
 առույգանալ-թուլանալ, թոշնել, թմրել, ճլորել
 առուն ջուր գալ (երազն իրականանալ)-փափագն անկատար մնալ
 առ ու տուր-առ ու կուլ (հափշտակություն, թալան)
 ասածը ասած լինել (բոլորովին չզիջել)-տեղի տալ
 ասածի տերը լինել (չզիջել)-թքածը լիզել (հնազանդվել)

ասեղ գցելու տեղ չկար (ազատ տեղ չկար)-քիչ մարդ կար, ազատ
 դատարկ տեղ կար
 ասեղը թելել (մեկի օգտին խոսել)-մեկի գործին վնասել
 ասեղի ծակից ծակով կանցնի (չափազանց նիհար է, հյուժված)-գեր է,
 չաղ է
 ասեղ կերած շուն (հյուժված)-առողջ, լիքը (մարմնով)
 ասեղ մաշկող (խիստ ժլատ)-առատածեռն
 ասեղների վրա լինել (իրեն ազատ չզգալ)-զգալ իրեն, ինչպես ծուկը
 ջրում
 ասլամի բերան ճղող (քաջ, կտրիճ)-վախկոտ, ուժատ
 ասլամի սիրտ ունենալ (քաջ լինել)-նապաստակի սիրտ ունենալ
 (երկչուտ՝ վախկոտ՝ խեղճ լինել)
 ասպարեզ դուրս գալ-ասպարեզից հեռանալ
 աստիճանաբար-միանգամից
 աստիճաններից ետ տալ (վռնդեղ)-ընդունել, հարգել
 աստծո գառ (հեզ)-աստծո երեսից ընկած//աստծու կրակ (չար)
 աստծու ձեռքի թաշկինակ (չատ խելոք, համեստ, հեզաբարո)-չար,
 պարծենկոտ
 աստծուն ծառայել (աստվածապաշտ լինել)-աստծուց երես դարձնել
 (անաստված լինել)
 աստծու պատիժ//աստծու կրակ (չարաբարո, անզուր)-գթառատ,
 հեզաբարո, հեզահամբույր
 աստծու օրինած (առաքինի)-աստծու անիծած (չար, անազնիվ,
 անառակ)
 աստղը բաց (երջանիկ)-աստղը փակ (ապաբախտ)
 աստղը բռնել (հավանել, սիրել)-դուր չգալ, ատել
 աստղը ընկնել (դժբախտանալ, ծախորդության հանդիպել)-աստղը
 բարձրանալ (բախտավորվել)
 աստղով լինել (բախտավոր հաճելի լինել)-անբախտ ամհաճ անդուր
 լինել
 աստվածասեր-աստվածատյաց
 աստված անիծի-աստված օրհնի
 աստվածապաշտ-աստվածուրաց
 աստված լսեց (աստված բաղձանքը կատարեց)-աստված խռովեց
 (աստված չօգնեց չհասավ)

աստված պահի (ապահով և երկար կյանք ունենա)-գրողը տանի,
 աստված կորցնի պատժի
 ասուն-անասուն
 ավագ-կրտսեր
 ավագի վրա տուն շինել//ավագի վրա կառուցել (անհիմն գործ բռնել)-
 որևէ գործ հուսատու՝ հաստատուն հիմքի վրա կառուցել
 ավարտ-սկիզբ
 ավարտել-սկսել
 ավարտուն-անավարտ, թերի, կիսատ, թերատ
 ավել-պակաս
 ավելանալ-պակասել
 ավելացնել, շատացնել-պակասեցնել, քչացնել, նվազեցնել
 ավելացում-պակասեցում, նվազեցում
 ավելի-նվազ, պակաս
 ավելի ուշ, հետագայում-ավելի շուտ, ավելի վաղ
 ավելորդ-պակասորդ
 սովելորդ-անհրաժեշտ, պետքական
 ավել-պակաս խոսել (առանց կշռադատելու ամեն բան ասել)-չափավոր
 խոսել, կշռադատել
 ավետարանի կողքին գրած (ճշմարիտ)-սուտ, սխալ
 ավետել-գուժել, բոթել (=բոթ վատ լուր հաղորդել)
 ավեր-շեն
 ավերել-կառուցել, շինել, պատրաստել
 ավուր հացի կարոտ (աղքատ, ընչազուրկ)-մեծ ունեցվածքի տեր,
 հարուստ, մեծատուն
 ատամնավոր-անատամ, ատամնատ, ատամնագուրկ
 ատամները հանել (չարիք գործելու հնարավորությունից զրկել)-
 վտանգավոր վնասակար դարձնել
 ատամները սեղմած (ատելությանը, զայրացած, զսպված)-
 սիրալիրությանը, հաճելիորեն
 ատելով ատել (ուժեղ ատել, զարշել)-ջերմորեն սիրել
 ատելություն-սեր, համակրություն, համակրանք
 արագ-դանդաղ, կամաց, ծանր
 արագախոս-դանդաղախոս, ծանրախոս
 արագանալ-դանդաղանալ
 արագաշարժ-դանդաղաշարժ, ծանրաշարժ

արագաշարժություն-դանդաղաշարժություն
 արագասահ-դանդաղասահ
 արագ-արագ-դանդաղ-դանդաղ, կամաց-կամաց
 արագացնել-դանդաղացնել
 արագընթաց-դանդաղընթաց
 արագորեն-դանդաղորեն
 արական-իգական
 արամբի-կանամբի (=կին ունեցող տղամարդ)
 արանքով սև կատու անցնել (գժտվել, խռովել)-ջերմ
 հարաբերություններ հաստատել, հաշտվել
 արատավոր-անարատ, մաքուր, անբիծ
 արգելել-թույլ տալ, թույլատրել
 արգելված պտուղ (անթույլատրելի)-թույլատրելի
 արգելք-թույլտվություն, թույլատրում
 արդար, ճշմարիտ, իրավացի-անարդար, անիրավ, սուտ, ապօրինի,
 խարդախ
 արդարադատ-անարդարադատ
 արդարացիորեն-անարդարացիորեն
 արդարացնել-մեղադրել
 արդարացում-մեղադրանք
 արդարություն-անարդարություն, անիրավություն, մեղք, հանցանք,
 խարդախություն
 արդեն-դեռևս
 արդյունավետ-ապարդյուն, անարդյունք
 արեգակի կտոր (շատ գեղեցիկ)-ածխի կտոր (տգեղ, անդուր)
 արթննի-քնի մեջ, երագում
 արթնանալ-քնել
 արթնացնել-քնեցնել
 արթուն-քնած
 արժանավոր-անարժան
 արժանի-անարժան
 արժանին հատուցել (ճիշտ գնահատել)-ըստ արժանվույն չգնահատել
 արժանիք, բարեմասնություն-պակասություն, արատ
 արժեքավոր-անարժեք, անպետք
 արի-անարի, երկչոտ
 արիաբար, քաջաբար-անարիաբար, երկչոտաբար

արիություն-վախկոտություն, երկչոտություն
 արհեստական-բնական, բնածին
 արծակ-չափածո
 արծակ-մեղ, սահմանափակ
 արծակել-լծել, կապել
 արյունատու-արյունառու
 արյունը գլուխը խփել//ինքն իրենից դուրս գալ//բերանը փրփուր կոխել
 (խիստ զայրանալ)-ինքն իրեն տիրապետել, հանդարտվել
 արյունը եռալ (շատ եռանդուն լինել)-արյունը երակներում սառչել
 (սարսռել)
 արյունը պղտորել (վրդովել, բորբոքել)-տրամադրությունը
 բարձրացնել, հանգստացնել
 արյունը սառ պաղ (հավասարակշռությունից դուրս չեկող,
 սառնարյուն)-արյունը տաք (տաքարյուն, բորբոքվող)
 արյունը տաք (տաքարյուն, ջահել)-արյունը պաղ (սառնարյուն, ծեր)
 արյունոտ-անարյուն
 արյուն-քրտինքով (մեծ դժվարությամբ, տանջանք-չարչարանքով)-
 դուրավ, հեշտությամբ
 արշալույս-վերջալույս, մայրամուտ
 արվեստավոր-անարվեստ
 արտադրել-սպառել
 արտադրողական-անարտադրողական
 արտահայտիչ-անարտահայտիչ
 արտահանում-ներմուծում
 արտահաստիքային-հաստիքային
 արտաշնչել-ներշնչել
 արտասվել-ծիծաղել
 արտաքին-ներքին
 արտաքնապես-ներքնապես
 արտաքո կարգի (արտասովոր)-սովորական կարգով
 արտաքուստ-ներքուստ
 արցունք բերել (լացացնել)-խնդրություն պարզակել
 արքա-ծառա
 արքայական-դժոխային, ռամկական
 արևածագ-արևամուտ
 արևային, արևոտ-ամպոտ, մռայլ, անարեգ

արևելյան-արևմտյան
արևելք-արևմուտք
արևի երես հանել (բացահայտել)-թաքցնել
արև ծագել (պայծառանալ, մոայլությանը ժպիտ հաջորդել)-մռայլվել,
տխրել
արևով երդվել (շատ հարգել՝ սիրել)-արևը թաղել (ատել, չհարգել)
ափի մեջ (պարզորոշ տեսանելի) -անտեսանելի
ափին տալ (ալեկոծվել)-հանդարտվել
ափսոսը գալ (ափսոսալ, խնայել)-շռայլել, չափսոսալ, չխնայել

Բք

բազմաբառ-սակավաբառ
բազմաբեր-սակավաբեր
բազմաբնակ-սակավաբնակ
բազմաբջիջ-միաբջիջ
բազմաթերթ-սակավաթերթ
բազմաթիվ-սակավաթիվ
բազմակնություն-միակնություն
բազմակողմանի-միակողմանի
բազմահնչյուն-սակավահնչյուն
բազմաձայն-միաձայն, մենաձայն
բազմամարդ-սակավամարդ
բազմամյա-միամյա
բազմանալ-քչանալ, սակավանալ
բազմանդամանի-միանդամանի
բազմանիշ-միանիշ
բազմանշանակ-միանշանակ
բազմաշերտ-միաշերտ
բազմաչա-միակնանի, միաչա, միաչքանի
բազմասյուն-միասյուն
բազմավանկ-միավանկ
բազմատարր-միատարր
բազմատեսակ-միատեսակ
բազմատերև-միատերև, սակավատերև

բազմարժեք-միարժեք
բազմացնել-քչացնել
բազմափեղկ-միափեղկ
բազմափորձ-սակավափորձ
բազմիմաստ-մենիմաստ
բազմիմաստություն-մենիմաստություն
բազմիշխանություն-մենիշխանություն
բազմոտանի-միոտանի
բազմօրյա-սակավօրյա, միօրյա
բազում-սակավ, քիչ, մի
բաժան-անբաժան, միասին, միատեղ, կախյալ, համատեղ
բաժանել-միացնել, միավորել, հավաքել
բաժանում-բազմապատկում
բաժինը բերել (մասնակցել)-անմասն մնալ
բախտավոր, երջանիկ-դժբախտ, անբախտ, ապաբախտ
բախտավոր աստղի տակ ծնվել (երջանիկ լինել)-վատ աստղի տակ
ծնվել (դժբախտ լինել)
բախտավորվել-դժբախտանալ, անբախտանալ
բախտավորություն-դժբախտություն, անբախտություն
բախտը աջ (գործերը հաջող)-բախտը ձախ
բախտը գտնել (երջանականալ)-բախտը կորցնել
բախտի անիվը աջ դառնալ (գործերը հաջող գնալ)-բախտի անիվը
թեքվել ձախ դառնալ
բախտի դռները բացվել (հաջողության հանդիպել)-բախտի դռները
փակվել
բախտից զանգատվել (իր կյանքից դժգոհել)-բախտից գոհ լինել
բախտից փախչել (բարենպաստ պայմաններից չօգտվել)-բախտից
կախվել կաչել
բախտն անիծել (իր ճակատագիրը նախատել)-բախտը սիրել
(ճակատագրից գոհ լինել)
բաղաձայն-ձայնավոր
բամբ (=թավ, ցածր և հաստ (ձայն)-նուրբ. դաշն, քաղցր
բամբասանքի բույն (միշտ բամբասող)-բամբասանք ատող չսիրող
բանագետ-անգետ
բանալ, բացել-փակել, գոցել, ծածկել, կողպել
բանական, գիտակ-անբանական, անգիտակ

բանը բուրդ լինել//բանը ծախ լինել (անհաջողության մատնվել)-
բարվոք վիճակում լինել
բանի տեղ դնել (զնահատել, արժանիքը ճանաչել)-կարևորություն
չտալ, հաշվի չառնել
բանից դուրս գալ (պարզվել, երևալ)-անհայտ մնալ
բանուկ-սակավագնաց, քիչ երթևեկություն ունեցող
բավականություն-անբավականություն, անախորժություն
բավարար-անբավարար
բարակ-հաստ
բարակ մանող (սաստիկ նիհար, հիվանդոտ)-պարարտ, գեր, առողջ
բարոություն-պարզություն
բարեբախտ-չարաբախտ, տարաբախտ
բարեբախտաբար-դժբախտաբար
բարեբանել (=գուլել)-չարաբանել, չարախոսել
բարեբաստիկ-չարաբաստիկ
բարեբարո-չարաբարո
բարեբեր-չարաբեր
բարեգործ-չարագործ
բարեգութ-չարագութ, դաժան, անգութ, անագորույն
բարեգուշակ-չարագուշակ
բարեդեմ-չարադեմ
բարեխիղճ-անբարեխիղճ
բարեխոհ-չարախոհ
բարեխոս-չարախոս
բարեխոսական-չարախոսական
բարեծնունդ-չարածնունդ
բարեկազմ-կոպիտ, անտաշ, անճոռնի
բարեկամ-չարակամ, թշնամի, ոսոխ, ախոյան, հակառակորդ
բարեկամաբար-թշնամաբար
բարեկամանալ-թշնամանալ
բարեկարգ-անբարեկարգ
բարեկիրթ-անբարեկիրթ
բարեհաճ-անբարեհաճ
բարեհաջող-անբարեհաջող
բարեհոգի-անբարեհոգի, չարահոգի, չարակամ
բարեհույս-անբարեհույս

բարեձև-տձև
 բարեձևութուն-տձևութուն
 բարեմիտ-չարամիտ
 բարեմտորեն-չարամտորեն
 բարենպաստ-անբարենպաստ
 բարեշուք-չարաշուք
 բարեպաշտ-չարապաշտ, չարասեր
 բարեսիրտ-չարասիրտ
 բարետես-չարադեմ, չար կերպարանք ունեցող
 բարի- չար, անբարի, վատ
 բարիանալ-չարանալ, չար դառնալ
 բարի աչքով նայել (բարյացակամ լինել)-չար աչքով նայել
 բարի հրեշտակ-չար ոգի, չարք
 բարիք-չարիք
 բարկությունը գալ (վրդովվել, զայրանալ)-բարկությունը շիջել
 (հանդարտվել)
 բարձել-բեռնաթափել
 բարձր-ցածր
 բարձրագույն-ցածրագույն, ստորին
 բարձրադիր-ցածրադիր
 բարձրակետ-ցածրակետ
 բարձրակրունկ-ցածրակրունկ
 բարձրահասակ-ցածրահասակ, կարճահասակ
 բարձրահարկ-ցածրահարկ
 բարձրածայն-ցածրածայն
 բարձրանալ-ցածրանալ, իջնել
 բարձրանիստ-ցածրանիստ
 բարձրաշեն-ցածրաշեն
 բարձրաստիճան-ցածրաստիճան
 բարձրացնել-ցածրացնել, իջեցնել
 բարձրացնել-նվաստացնել, ստորացնել
 բարձրացում-ցածրացում, իջեցում, ստորացում
 բարձրաքանդակ-խորաքանդակ, ցածրաքանդակ
 բարձր-բարձր-ցածր-ցածր
 բարձրիկ-ցածրիկ
 բարձրորակ-ցածրորակ

բարձունք-ցածրավայր, ցածր վայր՝ տեղ
 բարյացական-անբարյացական
 բարոյական-անբարոյական, բարոյագուրկ, հակաբարոյական,
 անբարո
 բարորակ-չարորակ
 բարոյություն-չարոյություն
 բարև-ցտեսություն, մնաս բարով, հրաժեշտ
 բարևել-հրաժեշտ տալ
 բաց-մուգ
 բաց-փակ, գոց, ծածուկ
 բացակա-ներկա
 բացակայություն-ներկայություն
 բացահայտ-թաքուն, զաղտնի, ծածուկ
 բաց աչքերով (զիտակցաբար)-փակ աչքերով (առանց մտածելու՝
 կշռադատելու)
 բացառիկ-սովորական
 բացասական-դրական
 բացասականորեն-դրականորեն
 բացարձակ-հարաբերական
 բացել-փակել, ծածկել, գոցել
 բաց ճակատ (պարզերես, հպարտ)-զլուխը կախ
 բաց սիրտ (սրտաբաց, անկեղծ, ուրախ)-տխուր
 բացվել-փակվել, ծածկվել, գոցվել
 բեղի տակին փնթփնթալ (ցածրածայն ոչ պարզ խոսել)-բարձրածայն
 պարզ ու հասկանալի խոսել
 բեղ ու մորուքով (հասուն, տարեց)-դեռահաս, աղվամազն երեսին
 բեղուն-անբեղուն, չբեր
 բեմ բարձրանալ (դերասանական գործունեություն ծավալել)-բեմից
 իջնել, բեմը թողնել
 բեռնավորում-բեռնաթափում
 բեռնատար-մարդատար
 բեռնել-բեռնաթափել
 բերանացի-գրավոր
 բերանդ լույս դառնա-բերանդ չորանա (անեծք խոսելու
 կարողությունից զրկվես)

բերանը դուռ չունենալ (գաղտնիքը պահել չկարողանալ)-բերանը
 փակել կարողանալ
 բերանը նշխարք չդնել (սոված մնալ)-բերանը բան դնել
 բերանը շաղ տալ (հայհոյել)-չափը ճանաչել, խոսքը չափավորել
 բերանը ցուր առնել (պապանձվել, լռել)-չատախոսել
 բերանը փակել-բերանը բացել
 բերանին դուռ դնել//բերանին փակ դնել (լռել)-բերանին կապ չունենալ
 (սանձարձակ խոսել)
 բերանին հուպ տալ (1. լռել, 2. չուտել)-1. խոսելը շարունակել, 2. ուտել
 բերանից կաթի համ՝ հոտ գալ (դեռ երեխա լինել, անփորձ լինել)-
 չափահաս լինել
 բերանից պինդ (գաղտնապահ)-բերանից թույլ
 բերանի փակը հանել-բերանը կողպել//բերանին փակ դնել
 բերանում լեզու դնել-լեզուն կտրել
 բերանում լեզու ունենալ-բերանում ցուր լինել (պապանձվել,
 պատասխանել չկարողանալ)
 բերանում լոբի՝ չիր չթրջվել (բերանբաց լինել)-գաղտնապահ լինել
 բերդի բանալիները հանձնել (ինքնակամ հանձնվել թշնամուն)-լծի
 տակ չմնալ (ազատ ապրել)
 բերել-տանել
 բերնեբերան-դատարկ
 բերովի-տանովի
 բերրի-անբերրի
 բերքից ընկնել (այլևս բերք չտալ)-բերրիանալ
 բթանալ-սրանալ
 բժիշկ-հիվանդ
 բկիդ կանգնի (չվայելես)-հալալ լինի (վայելես)
 բնագիր-պատճեն
 բնական-արհեստական, շինծու, շինովի
 բնականաբար-արհեստականորեն
 բնակելի-անբնակ
 բնակվել-գաղթել
 բնիկ-օտար, եկվոր
 բոլոր դեպքերում-ոչ մի դեպքում
 բոլոր (ը), ամեն ինչ-ոչինչ, ոչ ոք, ոչ մեկը, ոչ մի բան

բուրորը նույն գուռնան են փչում (ուրիշի խոսքն են կրկնում)-իր
կանգունով է չափում
բողկի պես (առողջ, առույգ)-հիվանդ
բոյը թիզուկես (բավական կարճահասակ)-բարձրահասակ,
պարթևահասակ
բորբոքվել, թեժանալ-մարել, շիջանել, շիջել, հանգչել
բոցավառվել-մարել
բռնել-բաց թողնել
բռնկվել-հանգչել, մարել
բութ-սուր
բուժական-հակաբուժական
բուժել-ախտահարել
բուժիչ-վարակիչ
բույն դնել (ապրել, բնակվել)-բույնը լքել
բուռը մտնել (ենթարկվել)-չհպատակվել, չենթարկվել
բուսակեր-մսակեր
բուրավետ-անբույր, անհոտ
բուրդը գգել (խիստ քննադատել)-գովաբանել

ԳԳ

գագաթ-ստորոտ
գագաթնակետ-ցածրակետ
գագային-հակագագային, պինդ (վիճակ)
գալ, հասնել-գնալ, հեռանալ
գահակալություն-գահավիժություն, գահընկեցություն
գահ բարձրանալ (թագավոր դառնալ, իշխել)-գահից ընկնել
(իշխանությունից գրկվել)
գաղտնաբար, ծածուկ-բացեիբաց, բացահայտորեն
գաղտնապահ-բերանբաց, անգաղտնապահ
գաղութային-հակագաղութային, տերունական
գայլ բարեպաշտ (կեղծավոր՝ երկերեսամի մարդ)-անկեղծ՝ բարի մարդ
գայլի ճրագու քսել (մեկին գայթակղել)-գայթակղել կախարդել
չկարողանալ

գայլի մազ ունենալ վրան (բախտավոր լինել)-դժբախտ լինել,
 անհաջողություն կրել
 գանձ կապել (հարստություն դիզել)-գանձը վատնել
 գառ-գայլ
 գառան պես մարդ (խոնարհի հեզ հլու մարդ)-անհնազանդ ըմբոստ
 մարդ
 գառները ուլերից ջոկել (արդարաներին մեղավորներից տարբերել)-
 թացն ու չորը իրար հետ այրել
 գառնություն-գայլություն
 գարնանային-աշնանային
 գարնանացան-աշնանացան
 գարնանը-աշնանը
 գարուն-աշուն
 գարուն աշուն իրար խառնել- լավն ու վատը իրարից ջոկել՝
 առանձնացնել
 գեղեցիկ-տգեղ, այլանդակ
 գեղեցկաբար-տգեղաբար
 գեղեցկադեմ-տգեղադեմ
 գեղեցկանալ-տգեղանալ
 գեղեցկացնել-տգեղացնել
 գեղեցկացուցիչ-տգեղացուցիչ, տգեղացնող
 գեղեցկորեն-տգեղորեն
 գեղեցկություն-տգեղություն
 գետնին կպած (ցածր, կարճ, կարճահասակ)-բարձր, երկար
 բարձրահասակ
 գեր-նիհար, վտիտ, լղար, լղպոր
 գերազանձում-թերազանձում
 գերազնահատել-թերազնահատել
 գերազնահատելի-թերազնահատելի
 գերազնահատում-թերազնահատում
 գերադասել-ստորադասել
 գերածախս-թերածախս
 գերակատար-թերակատար
 գերակատարում-թերակատարում
 գերակշիռ-թերակշիռ
 գերակշռել-թերակշռել

գերաճ-թերաճ
 գերաճում-թերաճում
 գերան-շյուղ, ծեղ
 գերարտադրություն-թերարտադրություն
 գերբեռնվածություն-թերբեռնվածություն
 գերզարգացում-թերազարգացում
 գերմանասեր-գերմանատյաց
 գերսնել-թերասնել
 գթագուրկ-գթառատ
 գթասրտություն-դժնասրտություն
 գթոտ-անգութ
 գթություն-անգթություն
 գժտվել-հաշտվել
 գին չունենալ (անարժեք լինել)-թանկ լինել
 գիշեր-ցերեկ
 գիշերային-ցերեկային
 գիշերապահ-ցերեկապահ, ցերեկային պահակ
 գիշեր բարի-լույս բարի
 գիշերն ընկնել (մթնել, գիշերը վրա հասնել)-լույսն ընկնել (լուսանալ)
 գիսառատ-ճաղատ
 գիտական-հակագիտական
 գիտակից-անգիտակից
 գիտակցաբար-անգիտակցաբար, բնազդաբար
 գիտակցորեն-տարերայնորեն, անգիտակցաբար
 գիտուն-անգետ, տգետ, հիմար
 գիրանալ-նիհարել
 գիրություն-նիհարություն
 գլխագիր-փոքրագիր
 գլխավոր-երկրորդական
 գլխավոր դեր խաղալ (ամենաազդեցիկը լինել)-երկրորդական դեր խաղալ
 գլխի ընկնել//գլուխ մտնել (հասկանալ, կռահել)-հասկանալ ըմբռնել
 իմանալ չկարողանալ
 գլխի մագի չափ (անթիվ, անհամար)-քիչ, սակավ, համրվող
 գլխին ամպեր կուտակվել (աղետի մեջ լինել)-վտանգից ու փորձանքից ազատված լինել

գլխին գդակ դնել (տղամարդ լինել)-գլխին լաչակ ծածկել
 գլխին դնել ման ածել (մեկի նկատմամբ հոգ տանել, գուրգուրել)-
 ուշադիր հոգատար չլինել
 գլխին հարամ լինել (չմարսել, չվայելել)-բավականությամբ
 օգտագործել իր ստեղծած բարիքները
 գլխին ծյուն նստել (մագերը ճերմակել, ծերանալ)-սևահեր
 երիտասարդ լինել
 գլխին վայ տալ (սգալ, ողբալ, կոծել, զղջալ)-ուրախանալ, չափսոսալ
 գլխին տալ (զղջալ, ողբալ)-անհողողողո մնալ, ուրախ ապրումներ
 ունենալ
 գլխին տեր ունենալ (հովանավորող ունենալ)-անտեր անպաշտպան
 լինել
 գլխին փափախ դնել (տղամարդ լինել)-գլխին լաչակ կապել
 գլխիս վրա//աչքիս վրա (սիրով, հաճությամբ)-տհաճությամբ
 գլխիվեր-գլխիվայր
 Ըլխում ամբանալ (հիշել, յուրացնել)-մոռանալ
 Ըլորել ցելիս մեջ (խայտառակել, վարկաբեկել)-ցելից հանել
 Ըլուխ-պոչ, ներքև, տակ, ոտ
 Ըլուխ բերել (որևէ գործ հաջողությամբ ավարտել)-գործը ծախողել
 Ըլուխ գալ (հաջողվել)-Ըլուխը գալ (փորձանքի հանդիպել)
 Ըլուխ Ըլխի//քիթ քթի (մտերմորեն, ծածուկ)-չարակամորեն, բացահայտ
 Ըլուխ գովող (պարծենկոտ, ամբարտավան)-համեստ
 Ըլուխ դնել (ուշադրություն դարձնել, մեկով զբաղվել)-Ըլխից հեռացնել
 Ըլուխը ծանր//կրունկը ծակ (բանհմաց, խելոք)-անբան, տգետ,
 հետամնաց
 Ըլուխը ծռել (խեղճանալ, աղաչել, մուրալ)-Ըլուխը բարձր պահել
 (չընկճվել)
 Ըլուխը կախ (ամոթահար)-քիթը բարձր
 Ըլուխը կախել-քիթը բարձրացնել (գոռոզանալ)
 Ըլուխը կացնի տակ դնել (իրեն զոհաբերել)-Ըլուխն ազատել
 Ըլուխը հաստ (բթամիտ, չզիջող)-սուր միտք ունեցող
 Ըլուխը մի բանից չբարձրացնել (զբաղված լինել)-գործը ընդհատել,
 ժամանակ ունենալ
 Ըլուխը յուղել (քաղցր խոսքերով խաբել)-Ըլուխը թլոգել չկարողանալ
 Ըլուխը պահել (իրեն խնայել, ծուլանալ)-ջանասեր լինել

գլուխը քարի տակ մնալ (անօգնական վիճակում լինել)-գլուխը քարի
 տակից հանել
 գլուխ հանել//գլուխ բերել (հասկանալ, լուծել)-որևէ կնճռոտ բան լուծել
 պարզել չկարողանալ
 գլուխն աշխատել (հասկանալ)-խելքը չհասնել
 գլուխ չունեցող (անգետ, տգետ)-խելոք, հասկացող
 գլուխ պահել (մի կերպ ապրել, յուր գնալ)-գանձ կապել
 գլուխ պրծացնել//գլուխն ազատել (մի կերպ փրկվել)-գլուխը
 փորձանքի մեջ գցել
 գլուխ տանել//համը հանել (ծանծրացնել)-հաճելի դարձնել
 գլուխ ուտել-գլուխն ազատել (մի կերպ փրկվել)
 գնալ-գալ, վերադառնալ, մնալ
 գնալից լինի, գալից չլինի (անեծք կորչես, մեռնես)-բարով գնաս, բարով
 գաս (մաղթանք)
 գնացական-մնացական
 գնացող-մնացող
 գնդակը խնոր դառնա (գնդակը նպատակին չհասնի)-գնդակը գետնին
 չընկնի (չվրիպի)
 գնել, առնել-ծախել, վաճառել
 գնող-վաճառող
 գնորդ-վաճառորդ
 գնում-վաճառք
 գոգավոր-ուռուցիկ
 գոհ-դժգոհ, անգոհ
 գոհանալ-դժգոհանալ
 գոհություն, հաճույք-դժգոհություն, տհաճություն
 գոհունակ-դժգոհ, անգոհ
 գոհունակություն-դժգոհություն
 գոյություն-չգոյություն, անգոյություն, անէություն
 գոռալ, ծչալ-շշնջալ, փսփսալ
 գոռոզ-համեստ, հեզ
 գոռոզություն-համեստություն
 գովաբանել-պարսավել, պախարակել, վատաբանել, փնովել
 գովազդատու-գովազդառու
 գովասանական-նախատական
 գովասանք-հայիոյանք, պարսավանք, դսրովանք (=նախատինք)

գուլէլ-պարսավել, ծաղրել, հայիոյել, վատաբանել
 գովելի-պարսավելի, պախարակելի, այպանելի
 գովեստ, գովք- պարսավանք, դսրովանք, նախատինք, հայիոյանք,
 հիշոց, լուտանք
 գովքն անել (մեկին մի բան փառաբանել)-պախարակել, վատաբանել
 գոտին թուլանալ (քաղցել, ուտել ցանկանալ)-գոտին պնդանալ
 (կշտանալ)
 գործադրելի-անգործադրելի
 գործածելի-անգործածելի, չգործածվող
 գործասեր-գործատյաց
 գործ բաց անել-գործը կարծել (գործի ընթացքը դադարեցնել)
 գործը աջ գնալ (հաջողվել)-գործը ձախ գնալ
 գործը տեսնել (գործ աշխատանք կատարել)-գործը փչացնել
 (խանգարել)
 գործնական-տեսական
 գործնականապես-տեսականապես
 գործունյա-անգործունյա, անտարբեր
 գորովալից-կոպիտ, անտաշ, գորովագուրկ
 գտնել-կորցնել
 գրագետ, գրաճանաչ-կիսագրագետ, անգրագետ, անգրաճանաչ
 գրագետ, վարպետորեն-անգրագետորեն, տգիտաբար
 գրագիտություն-անգրագիտություն
 գրանցվել-դուրս գրվել
 գրավատու-գրավառու
 գրավիչ-ծանձրալի
 գրկաբաց ընդունել (ուրախությամբ դիմավորել)-տհաճորեն ընդունել
 գրոհ-հակագրոհ, նահանջ
 գրոհել-նահանջել
 գրողի տոպրակից ընկնել (փորձանքից ազատվել)-գրողի բաժին
 դառնալ (փորձանքի մեջ ընկնել)
 գրչագիր-տպագիր
 գրչագրություն-տպագրություն
 գրպանը դատարկ//գրպանը ծակ (աղքատ, անդրամ)-գրպանը հաստ
 (հարուստ)
 գրպանը դատարկել (մեկին ծախսի տակ զցել)-գրպանը լցնել
 տկարություն-ուժեղություն, զորություն
 տնաշեն-տնավեր, տնաքանդ
 տնավոր-անտուն
 տնից-տեղից կտրված (վտարանդի)-բնիկ, տեղացի
 տնվոր-տնատեր
 տնտեսել-շռայլել, վատնել
 տնտեսվարություն-անտնտեսվարություն
 տոթ-զով, հով, պաղ, ցուրտ
 տոնական, շքեղ-ամենօրյա, հասարակ
 տոնականորեն-միապաղաղ, ծանծրալի
 տոնը բարձրացնել-տոնը իջեցնել
 տոն տալ (խրախուսել, ոգևորել)-թևաթափ անել (հուսահատեցնել, ընկճել)
 տոպրակը բաց անել (ասել, խոսել)-տոպրակը դատարկել (ասելիքը ավարտել)
 տրամաբանական-հակատրամաբանական
 տրամադիր-անտրամադիր

տրամադրությունը բարձրանալ-տրամադրությունը ընկնել (տխրել)
տրտմել-ուրախանալ, զվարճանալ
տրտնություն-ուրախություն, զվարճություն
տրտում-ուրախ, զվարթ
տուն դնել (ընտանիք կազմել, նյութական միջոցներ հայթայթել)-տունը
քանդել
տունդ շինվի-տունդ քանդվի (անեծք՝ տունդ՝ օջախդ ավերվի)
տունը այրել՝ շորահոտ չգալ (շատ չքավոր լինել, հագուստեղեն
չունենալ)-տունը մտնելիս բարևը մոռանալ
տունը աքլորին բարձել-բարեկեցիկ կյանք վարել
տուն ու տեղ դառնալ (տնավորվել)-անընտանիք՝ մենակ մնալ
տնական-կարճատև, ժամանակավոր, վաղանցիկ
տնականորեն, շարունակաբար-կարճատև, սեղմ
տնականություն-վաղանցիկություն

Ր

րոշ (=մաքուր, մաքրափայլ)-աղտոտ, կեղտոտ, կեղտակուլ
րոպե առաջ (շուտ, արագ)-ուշ, դանդաղ
րոպեի ազդեցության տակ (տվյալ պահի ապրումների մեջ իրեն հաշիվ
տալ չկարողանալով)-իրեն տիրապետել կարողանալով
րոպեից օգտվել (նպաստավոր հանգամանքներից հարմար պահը բաց
չթողնել)-րոպեն բաց թողնել//րոպեն կորցնել (հարմար պահը՝
առիթը չկարողանալ օգտագործել)

Ց

ցած գցել (տապալել, գրաված պաշտոնից հանել)-բարձրացնել
ցած (ր)-վեհ, բարձր, վսեմ, հպարտ, գոռոզ
ցածրաձայն-բարձրաձայն
ցածրացում-բարձրացում
ցամաք-ջուր, ծով
ցամաք աղբյուր (անկարեկից)-օգնող, կարեկից
ցամաք աչքով ապրել (լաց՝ դժբախտություն՝ սուգ չտեսնել)-ծանր

կյանքով ապրել
 ցամաքել, վերանալ-թացանալ, ներծծվել
 ցամաքեցնել, չորացնել-թրջել, թացացնել
 ցամաք հացի կարոտ (ծայրահեղ աղքատ)-ուճուր, ընչատեր
 ցամաք ծորի աղվես դառնալ//օգոստոսի աղվես դառնալ (խիստ
 հյուծվել, շատ նիհարել)-կազդուրվել, գիրանալ
 ցայգ (=լուսաբաց, այգաբաց)-գիշերամուտ
 ցանել-հնծել, քաղել
 ցանկալիություն-անցանկալիություն
 ցանցառ-խիտ, թավ
 ցանցառանալ-խտանալ, թավանալ
 ցավի գալ (հիվանդանալ)-առողջանալ, կազդուրվել
 ցավի մեջ ընկնել-դժվար վիճակից դուրս գալ, հոգսերից ազատվել
 ցավ ի սիրտ (տիպաբանություն, հարկադրելով, ստիպված)-հաճելիորեն
 ցավ ու կրակ (զլխացավանք, փորձանք, դժբախտություն)-
 հաջողություն, բախտավորություն
 ցերեկ-գիշեր
 ցերեկային-գիշերային
 ցնծագին-տխրագին
 ցնծալ, ուրախանալ-տրտմել, տխրել, թախծել, սգալ
 ցնծություն, հրճվանք-տխրություն, թախիծ, թախծություն
 ցուլք-ստվեր, շուք
 ցուփ-ժուժկալ, պարկեշտ, համեստ
 ցուփություն-պարկեշտություն, համեստություն
 ցրել-հավաքել, խմբել, կենտրոնացնել
 ցրվել-խմբվել, հավաքվել, կենտրոնանալ
 ցուրտ-շոգ, տապ

Ուռ

ուժգնորեն-թույլ կերպով, թուլորեն
 ուժեղ-թույլ, տկար
 ուժեղանալ-տկարանալ, թուլանալ
 ուժեղացնել-թուլացնել, տկարացնել
 ուժեղություն-թուլություն, տկարություն, անզորություն

ուժերը ջլատել (ուժեղ լարվածությունից մեծ ջանքեր գործադրելուց
 տկարանալ)-ուժերը հավաքել
 ուժի գալ (ուժերը վերականգնել)-ուժից ընկնել (տկարանալ)
 ուժից վեր լինել (հնարավորություններին համապատասխան չլինել)-
 ի վիճակի լինել
 ուխտ դնել-ուխտը կոտրել (երդումը որոշումը խախտել)
 ուղարկել-ստանալ
 ուղիղ-ծուռ, կեռ, խորդուբորդ, սխալ, թյուր, սուտ, արտուղի
 ուղիղություն-կորություն, թեքություն
 ուղղագիծ-կորագիծ
 ուղղախոս-սխալախոս, ստախոս, թվատ
 ուղղակի-անուղղակի, ոչ անմիջական
 ուղղահայաց-հորիզոնական
 ուղղածող-կեռածող
 ուղղամիտ-խորամանկ, անարդարամիտ, երկերեսանի
 ուղղափառ-կաթոլիկ, անհավատ, խարդախ, նենգ
 ուղղել, շտկել-ծռել, թեքել, կեռել, սխալեցնել
 ուղղորդ (=ճիշտ, շիտակ)-սուտ, կեղծ
 ուղղվել-ծռվել, թեքվել, կորացվել
 ուղն ու ծուծը (հիմնականը, գլխավորը)-երկրորդականը, անկարևորը
 ուղտը պոչից վերցնել (հեշտ բանը դժվարացնել)-դժվար բանը
 հեշտացնել
 ուղտի ականջում քնած (անտեղյակ)-ճարպիկ, տեղյակ
 ուղտի մման ոխ պահել-ոխը վրեժը մտքից հանել մոռանալ
 ուղտի պոչի մման ոչ երկարել, ոչ կարճանալ-առաջադիմել, մեծ
 հաջողություն ունենալ կյանքում
 ունքամեջը բացվել (մռայությունն անցնել)-մռայվել, տխրել
 ունքերը բացել-ունքերը կիտել (տխրել)
 ունքը շինելու տեղ աչքն էլ հանել (դրությունը վատթարացնել, ավելի
 մեծ վնաս հասցնել)-դրությունը լավացնել
 ունևոր-աղքատ, չքավոր, չունևոր
 ունևորություն-չքավորություն, կարիք
 ուշադիր-անուշադիր
 ուշադրություն-անուշադրություն
 ուշիմություն-անուշիմություն

ուշքը գնալ (ուշաթափվել)-ուշքը գալ (սթափվել)
 ուշքը վրան (սթափ վիճակում)-թմրած ցրված վիճակում
 ուռչել-սմքել
 ուռչել-փքվել (խռովել)-հաշտվել
 ուռուցիկ-գոգավոր
 ուսյալ-տոգետ, անուս
 ուսումնասեր-ուսումնատյաց
 ուս ուսի տալ (համերաշխ հանդես գալ)-իրար խանգարել, համատեղ
 չգործել
 ուրախ-մոռյլ, տխուր, թախծոտ, տրտում
 ուրախաբար-տխրաբար, տխրորեն
 ուրախաբեր-տխրաբեր
 ուրախադեմ-տխրադեմ
 ուրախալի-տխրալի, թախծալի, ծանծրալի
 ուրախալից-տխրալից, թախծալից
 ուրախածայն-տխրածայն
 ուրախանալ-տխրել, տրտմել, ծանծրանալ
 ուրախացնել-տխրեցնել, վշտացնել
 ուրախությանը չափ ու սահման չլինել//ուրախությունից պար գալ-
 ուրախությունը փորը մնալ
 ուրախություն-տխրություն, դառնություն, դարդ, վիշտ, թախիծ
 ուրախ-ուրախ-տխուր-տխուր
 ուրանալ-խոստանալ, խոստովանել
 ուրանալի-խոստովանելի, անուրանալի
 ուրիշ երգ երգել (այլ բան ասել)-խոսքը կարծիքը չփոխել

Փփ

փաթաթել-քանդել, արծակել, բացել
 փակ-բաց
 փակագիծը փակել (խոսակցությունն ավարտել)-փակագծերը բացել
 (բացատրել ասածը)
 փակ աչքերով (առանց մտածելու)-բաց աչքերով (գիտակցաբար,
 հասկանալով)
 փակ բերան-բաց բերան (անգաղտնապահ)

փակ դռներով (ծածուկ, գաղտնի, դժփակ)-բաց դռներով (հայտնի,
 կողմնակի անձանց ներկայությամբ)
 փակ դուռը բաց անել (վիճակը բարվոքել, պայմանները լավացնել)-
 բաց դուռը փակել
 փակել, կողպել-բաց անել, բացել
 փակը գցել (կողպել)- փակը ետ գցել (բացել)
 փաղաքշանք, զգվանք-կոպտություն
 փայլուն-անփայլ, անշուք
 փայտը շատ ծռել (ծայրահեղության մեջ ընկնել)-չափը պահել
 փայտի զոռով (ստիպողաբար)-կամավոր կերպով, իր կամքով, առանց
 ուժ գործադրելու
 փառաբանել, գովաբանել-վատաբանել, պախարակել, պարսավել,
 նախատել, կշտամբել
 փառասեր-համեստ, փառքի չձգտող, փառախույս
 փառասիրություն-համեստություն, փառատեցություն
 փառավոր-փառազուրկ, անփառունակ, խայտառակ
 փառունակ (=փառավոր)-անփառունակ
 փառք, հռչակ-խայտառակություն, անարգանք
 փառք է (անհամեմատ լավ է)-վատ է
 փաստալից-փաստազուրկ
 փարթամ-աճազուրկ, աղքատ, չքավոր
 փարթամանալ-աղքատանալ
 փարթամություն-աղքատություն
 փափագելի-անփափագելի, խորշելի
 փափախը գետնով տալ (անունը կոտրել, անպատվել)-պատիվը պահել
 փափկաբուրդ-կոշտաբուրդ
 փափկածայն-կոշտածայն
 փափկամազ-կոշտամազ
 փափկանալ-կոշտանալ, պնդանալ, կարծրանալ
 փափկանկատություն-անըրբանկատություն
 փափկասիրտ-խիստ, դժնյա, քարասիրտ
 փափկավուն-կոշտավուն
 փափկացնել-կոշտացնել, պնդացնել
 փափկացվել-կոշտացվել, պնդացվել
 փափկացում-կոշտացում, կարծրացում

փափկություն-կոշտություն, կարծրություն
 փափուկ-կոշտ, կարծր, չոր, պինդ, բիրտ, կոպիտ
 փափուկ սիրտ (շուտ ազդվող, նրբազգաց)-կոշտ քար սիրտ
 փետուր փոխած հավ դառնալ//թրջված հավ դառնալ (խեղճանալ,
 ընկճվել)-շքեղանալ, գեղեցկանալ, վեհանալ
 փթթել, ծաղկել-թռչնել, թառամել
 փիշտ-փիսի
 փիշտ-փիշտ-փիսի-փիսի (=կատվին կանչելու բացականչություն)
 փշերի վրա նստած լինել-հանգիստ խաղաղ վիճակում լինել
 փշոտ ճանապարհ (կյանքի և գործունեության դժվարին ուղի)-կանաչ
 ճանապարհ
 փոթորկային գիշեր-լուսապայծառ խաղաղ առավոտ
 փոխանակելի-անփոխանակելի
 փոխատվություն-փոխառություն
 փոխատու-փոխառու
 փոխ տալ-փոխ առնել
 փողը քամու բերանը տալ (շռայլել, վատնել)-փողը տեղին ծախսել
 փռչին երկինք բարձրացնել (պատժել, կործանել, հարվածել)-փռչին
 քամուն չտալ
 փոստը հանել (տանջել, չարչարել)-փոստը պրծացնել
 փորը դատարկ (քաղցած, սոված)-փորը լիքը (կուշտ)
 փորը ծռվել (վերաբերմունքը վատանալ, հակառակվել)-
 վերաբերմունքը լավանալ, համակերպվել
 փորը հաստանալ-փորը մեջքին կպչել (քաղցած լինել, նիհարել)
 փորը սատանա (օծ) մտնել (հակառակվել, չար բան անել)-հաշտվել,
 բարիանալ
 փորը վեց-վեց անել (շատ քաղցած լինել, քաղցից տրորվել)-քաղցը
 հագեցնել
 փորկապություն-փորլուծություն
 փորձառու-անփորձ
 փորձված աչք (հմուտ, լավն ու վատը ջոկող)-անփորձ աչք
 փորումը սիրտ չմնալ (սաստիկ վախենալ, սարսափել)-արիանալ
 փորում մնալ (չիրականանալ)-կարողանալ վայելել
 փորում օծեր լինել (չարամիտ նենգ մարդ լինել)-բարի բարյացակամ
 ճշմարտասեր մարդ լինել
 փոփոխ-անփոփոխ

փոփոխական-հաստատուն, մնայուն
փոփոխամիտ-հաստատամիտ, հաստատական
փոփոխելի-անփոփոխելի
փոքր-մեծ, երկար, բարձր, ավագ
փչած տիկ (հպարտ, գոռոզ)-համեստ, խոնարհ
փրկարար-կործանարար, կորստաբեր
փրկել, ազատել-կործանել
փութաջան-անփութ, հեղզ, ծուլ
փութկոտ-դանդաղկոտ
փութր-կարծր, պինդ
փուշը թողնել (հուսահատվել, ընկճվել)-հուսավառվել, ոգևորվել,
խրախուսվել
փուչ ելնել (ի դերև ելնել, ապարդյուն իզուր անցնել)-իրականանալ,
արդյունքի հասնել

Քք

քակտելի-անքակտելի
քաղաքակիրթ-բարբարոս, վայրենի, վայրագ
քաղաքակրթություն-բարբարոսություն, վայրագություն
քաղաքավարի-կոպիտ, գռեհիկ, անտաշ, անքաղաքավարի
քաղաքավարություն-գռեհկություն, կոպտություն, անտաշություն
քաղաքացիական-քրեական
քաղցել-հագննալ, կշտանալ
քաղցր, անուշ-դառը, լեղի, կծու, թթու
քաղցր աչք (բարյացակամություն, բարեհաճ վերաբերմունք)-չար աչք
քաղցր աչքով նայել-ծուռ աչքով մտիկ տալ (թշնամությամբ
ատելությամբ վերաբերվել)
քաղցրաբար-դառնաբար
քաղցրաբարո-դառնաբարո
քաղցրաբեր-դառնաբեր
քաղցրաբուխ-դառնաբուխ, դառնություն պատճառող
քաղցրագին-դառնագին
քաղցրաթախիծ-դառնաթախիծ
քաղցրաժպիտ-դառնաժպիտ

քաղցրալուր-դառնալուր
 քաղցրախոս-դառնախոս (=դառն՝ խայթող լեզվով խոսող)
 քաղցրախորհուրդ-դառնախորհուրդ
 քաղցրահամ-դառնահամ
 քաղցրահամբույր-դառնահամբույր, անբարեհամբույր, դժնի, դաժան
 քաղցրահնչյուն-դառնահնչյուն, դժվարահնչյուն
 քաղցրաձայն-դառնաձայն
 քաղցրանալ-դառնանալ
 քաղցրանուշ-դառնանուշ (=դառն և անուշ, իր դառնությամբ իսկ
 քաղցր)
 քաղցրաշունչ-դառնաշունչ
 քաղցրապես-դառնապես
 քաղցրապտուղ-դառնապտուղ
 քաղցրաջուր-դառնաջուր
 քաղցրասիրտ-դառնասիրտ
 քաղցրավուն-դառնավուն
 քաղցրացնել-դառնացնել
 քաղցրորեն-դառնորեն
 քաղցրություն-դառնություն
 քամած լինոն դարձած (հոգնած, ուժասպառ եղած)-հալից չընկած
 (ուժերով լի, անխոնջ)
 քամի կուլ տալ (անգործ լինել)-քիթը սրբելու ժամանակ չունենալ
 քամին քաշել (ցրտահարվելուց հասկերը փուչ մնալ)-հասկ գցել
 (հասկակալել)
 քամու բերած (անաշխատ եկամուտով ձեռք բերած)-տքնանքով՝
 դժվարությամբ ձեռք բերած
 քանակավոր-անքանակ
 քանի անգամ (բազմիցս, շատ-շատ դեպքերում)-հազվադեպ, քիչ
 քանի կտոր դառնալ (խիստ զբաղված՝ ծանրաբեռնված լինել)-անգործ
 պարապ մնալ
 քաշ գցել (գիրանալ)-նիհարել
 քաչալ հավի միս ուտել (շատ ապրել)-կարճ կյանք ունենալ
 քաջ, համարձակ, խիզախ, անվախ, արի-վեհերոտ, վախկոտ
 քաջարի, անվախ, անվեհեր-երկչոտ, վախկոտ
 քառածայն-միաձայն, եռաձայն
 քար անտարբերություն (սառը անկարեկից վերաբերմունք)-ջերմ

կարեկցական վերաբերմունք
 քարավան կտրող դուրս չգալ-լուրջ գործ կատարելու ունակ՝ կարող
 լինել
 քար դնել մի բանի վրա (մոռանալ տալ)-քարի տակից հանել (հիշել)
 քարը դուրս բերել (գործը հաջողեցնել)-քարը ծովը գցել (ծախողել)
 քարը ծովը գլորվել (հեղինակագրկվել, անհաջողության մատնվել)-
 հեղինակություն ձեռք բերվել
 քարը տեղը գտնել (խոսքը նպատակին հասցնել)-խոսքը նպատակից
 շեղել
 քարը քարին չթողնել (ավերել, հիմնահատակ կործանել)-շեն դարձնել,
 կառուցել
 քարին քացի տալով ապրել (նեղության կարիքի մեջ լինել)-լիության
 մեջ ապրել
 քարին քսել (ստացածն ուրանալ՝ չվերադարձնել)-հատուցել
 քար լինի կտրաքի (անհմարին է դիմանալը)-հանդուրժելի է, դիմանալը
 հնարավոր է
 քար խառնել (գործը խանգարել)-գործը հաջողեցնել
 քարով կարկուտով (մեծ դժվարությամբ)-հեշտությամբ
 քարով (ը) տալ (վարկաբեկել)-հեղինակությունը՝ պատիվը
 բարձրացնել
 քարտերը բացել (գաղտնիքները բացահայտել)-քարտերը խառնել
 բացախ ծախողի նմանվել (մռայլվել)-գոհանալ
 քեֆը բացվել (տրամադրությունը բարձրանալ)-քեֆը կոտրվել
 քեֆը տեղը լինել//քեֆին քեֆ չհասնել (լավ տրամադրություն ունենալ)-
 քեֆը հարամ լինել (տրամադրությունն ընկնել)
 քթին տալ (մերժել, արգելել)-թույլ տալ
 քթի տակ (շատ մոտիկ)-յոթ սարից այն կողմ
 քթի տակ/քթի տակին (մտքում ցածրաձայն (ծիծաղել՝ խոսել)-
 բարձրաձայն (ծիծաղել խոսել)
 քթից այն կողմ չտեսնել (սահմանափակ լինել)-հեռատես լինել
 քթից բերել (վայելել չթողնել, տեղը հանել)-հալալ անել
 քթից թռած//պնչից թռած (մեկին շատ նման, միևնույն բնավորությամբ)-
 տարբեր հակառակ բնավորությամբ
 քիթ անել (վիրավորվել, նեղանալ, խռովվել, թթվել)-հաշտվել,
 ուրախանալ
 քիթը բարձր (գոռոզ)-քիթը կախ (տխուր, շվար)

քիթը բարձրացնել (արհամարհել, գոռոզամտանալ)-քիթը կախել
 քիթը վեր (գոռոզ, մեծամիտ)-համեստ, հեզ, խոնարհ
 քիթը տրորել (նվաստացնել)-պատվի արժանացնել
 քիթը ցցել//քիթը տնկել-գլուխը խոնարհել
 քիթ թափ տալ (հոխորտալ, չարանալ)-հանդարտվել, բարիանալ
 քիթ-մուկը կախել (տխրել, տրտմել)-ունքերը բացել
 քիթ ու բերան անել (դժկամել)-ախորժելի լինել
 քիթ ու մուկ անել//քիթ ու պռունգ անել-ուրախանալ
 քնել-արթնանալ, զարթնել
 քնեցուցիչ-զարթեցուցիչ, զարթուցիչ
 քննադատելի-անքննադատելի
 քննադատորեն-անքննադատորեն
 քննելի-անքննելի
 քնքշաբար-անքնքշաբար, կոպտաբար
 քնքշանալ-խստանալ, կոպտանալ, կարծրանալ
 քնքշություն-կոպտություն, խստություն
 քնքուշ-կոպիտ, բիրտ, խիստ, ծանր
 քողարկել-քողազրկել, բացահայտել
 քոռ բախտ (անհաջողություն, դժբախտություն, վատ ճակատագիր)-
 բարի աստղ (երջանկություն)
 քոռ կոպեկ չունենալ (փողից բոլորովին զուրկ լինել)-հարուստ լինել
 քոռ ու փուչ անել (փչացնել, վատնել)-խնայել, տնտեսել
 քոսակ տարի (մեղմ՝ անսառնամանիք տարի)-դաժան՝ շատ ցուտ ձմեռ
 քրիստոնյա-հեթանոս, մահմեդական
 քրքիջ-հեկեկոց, հեկեկանք
 քուն-անքնություն, արթնություն
 քունը աչքերին գալ (քնել)-քունը աչքերից փախչել
 քունը կտրել (չքնել, անքուն մնալ)-քուն քաշել (խոր քնել)
 քունը հաղթել (չկարողանալ դիմադրել քնելու ցանկությանը)-քունը
 փախցնել

Օօ

օբյեկտիվորեն-սուբյեկտիվորեն
 օգնել-վնասել, խանգարել

օգնության ձեռք մեկնել (օգնել, օգնության հասնել)-խանգարել,
 վնասել
 օգնություն-արգելք, խոչընդոտ
 օգոստոսի աղվես (նիհար)-գեր
 օգտակար-վնասակար, զուր, ապարդյուն
 օգտակարություն-վնասակարություն
 օգտավետ-վնասակար, անօգուտ, անշահավետ
 օգուտ, շահ-վնաս, նյութական կորուստ
 օղային-ցամաքային, ջրային, հակաօղային
 օժանդակել, նպաստել-խանգարել, խոչընդոտել
 օժիտավոր-անօժիտ
 օձը բնից հանել (ճարտար լեզու ունենալ, կարողանալ համոզել)-
 հմայել՝ համոզել՝ գրավել չկարողանալ
 օձի լեղի (շատ դառն)-շատ քաղցր
 օձիքը ձեռք տալ (բռնվել)-ազատվել
 օձ խուզող (ժլատ, կծծի)-առատածեռն
 օձ ու գոտի (անհաշտ, կռվող)-հաշտ ու խաղաղ, խաղաղասեր
 օջախը հանգչել (տունը ավերվել)-օջախը ծխալ
 օջախը շեն կենալ (տունը կանգուն մնալ)-օջախը քանդվել (տունը
 լքվել՝ ավերվել)
 օջախ վառել (տուն դնել, ընտանիք կազմել)-օջախի ծուխը կտրել (շատ
 ծանր կորուստ ունենալ)
 օջախ վառող (տնարար, տուն ու տեղ դնող)-օջախ մարող (տնավեր,
 տուն քանդող)
 օտար-հարազատ, բնիկ, տեղացի, զուտ, բուն
 օտարանալ-հարազատանալ
 օտարասեր-օտարատյաց
 օտարասիրություն-օտարատեցություն
 օր արև չունենալ (թշվառ կյանք անցկացնել)-օր արև տեսնել
 օրենք-անօրինություն
 օրենք, կանոն-բացառություն
 օրը չանցած (իսկույն, նույն օրը, առանց ժամանակ կորցնելու)-հետո,
 հաջորդ օրերին
 օրը սև անել (տանջել, հալածել, ճնշել)-օր ու արև տալ (ուրախացնել)
 օրիգինալ (=բնագիր, սկզբնագիր)-պատճեն, թարգմանություն

օրինաբար-անօրինաբար, ապօրինի կերպով
 օրինական-ապօրինի, հակաօրինական
 օրինականություն-ապօրինություն
 օրինակելի-անօրինակելի, այսպես
 օրինաչափ-պատահական, դիպվածական
 օրինաչափական-անօրինաչափական, օրինաչափ բնույթ չունեցող
 օրինապահ-օրինազանց
 օրինապահություն-օրինազանցություն
 օրինավոր-անօրեն, ապօրինի
 օրինավորություն-ապօրինություն
 օրհնել-անիծել, նզովել
 օրհնություն, օրհնանք-անեծք, նզովք
 օրվա հացի կարոտ (աղքատ, չքավոր, չունևոր)-հարուստ, ունևոր, մեծ
 ունեցվածքի տեր
 օրվա փուռը կոտրվել (ցուրտը մեղմանալ)-ցուրտը խստանալ,
 ջերմաստիճանը իջնել
 օր ցերեկով-մութ գիշերով
 օր ու գիշեր (անընդհատ, անվերջ, միշտ)-երբեք, ոչ մի ժամանակ

Ֆ

ֆալախա զարնել (ֆալախայով պատժի ենթարկել. ֆալախկա=հին
 դպրոցում աշակերտներին պատժելու գործիք)-կարգապահական
 տույժից ազատել
 ֆալախա ուտել (պատժվել, տույժի ենթարկվել)-զանակոծվելուց
 ազատվել
 ֆալշ (=կեղծիք, խարդախում)-ճշմարտություն, անկեղծություն
 ֆակուլտատիվ (=ոչ պարտադիր, կամովին ընտրվող)-պարտադիր,
 մշտական
 ֆամիլյարություն (=անկաշկանդություն)-կաշկանդված լինելը,
 կաշկանդանք
 ֆանտազիա (=երևակայություն)-իրականություն, իրողություն
 ֆանտաստիկ-իրական, սովորական, ռեալ
 ֆանտաստիկական (երևակայական, ցնորական)-իրական,
 իրագործելի

ֆանֆարոն (=գոռոզամիտ, պարծենկոտ, գլուխգովան)-համեստ,
 խոնարհ, հեզաբարո
 ֆենոմեն (=բացառիկ արտասովոր արտակարգ երևույթ)-սովորական
 երևույթ
 ֆիասկո (=լիակատար ծախողանք)-փայլուն հաջողություն,
 բարեբաստիկ վիճակ
 ֆիզիկական-մտավոր, հոգևոր, հոգեկան
 ֆիզիկական աշխատանք-մտավոր աշխատանք
 ֆիզիկապես-հոգեպես
 ֆիկցիա (=պատրանք, մտացածին բան)-իրականություն, իրական բան
 ֆինալային (=եզրափակիչ մաս հանդիսացող, ավարտային)-
 ելլնթացային, մեկնարկային
 ֆլորա (=բուսական աշխարհ)-ֆաունա (=կենդանական աշխարհ)
 ֆոտոսիրող-մասնագետ, լուսանկարչությամբ զբաղվող անձ
 ֆորմալ (=ձևական, ձևամուլական)-էական, էությունից բխող
 ֆորմալիստ (=ձևապաշտ)-ռեալիստ (=իրապաշտ)
 ֆորմալիստություն (ձևականություն, ձևապաշտություն)-ռեալիզմ
 (իրապաշտություն)
 ֆրանսասեր-ֆրանսատյաց
 ֆրանսասիրություն-ֆրանսատեցություն
 ֆուխարա (=աղքատ, մութացկան)-հարուստ, ունևոր
 ֆունդամենտալ (=ամուր, հաստատուն, հիմնական, գլխավոր)-
 խախուտ, անկայուն, անհաստատ, երերուն, երկրորդական,
 անկարևոր
 ֆուտբոլասեր-ֆուտբոլատյաց
 ֆուտբոլասիրություն-ֆուտբոլատեցություն

Աղաքանյան Խաչատուր, Աղաքանյան Չառիկ

ԻԳԱԿԱՆ ԱՆՉՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՊԱՏՄԱԿԱՆ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ (ըստ ԱՂԱՋԱՆ ՏՈՂԱԾԱՌԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ)

Աղաքան տոհմածառի պատմության առաջին մասում («Մանկավարժ», 1991, թիվ 2) խոսք է եղել հայրենակցական- ազգակցական խմբի, Մաստարա գյուղի պատմության, **Աղաքան** «ազգի» արական անձնանունների, դրանց սոցիալ- պատմական հիմնավորման ու միտումների մասին: Շուրջ վեց սերունդ ընդգրկող տոհմածառի պատմության հակիրճ քննությամբ կատարվել է ընդհանրացում. երևույթը հատկանշական է հայկական ողջ գյուղաշխարհին:

Մինչև 19-րդ դարի կեսերը իգական անձնանունները սակավ են եղել: Ամոթ ու անպատշաճ է համարվել կնոջը անունով դիմելը: Տարեցներից շատերն այսօր էլ պահպանել են հիմնավորց այդ սովորույթը: Տղամարդը կնոջը սովորաբար կոչել է «աղջի», «հարս»: Ամուսինը, թեև թոռների տեր, գրուցելիս, իր կնոջ հասցեին խոսելիս գործածել է «իմ նշանածը», «այսինչի աղջիկը», «գաղթականի աղջիկը» ձևերը: Կինն էլ ամուսնու մասին խոսելիս օգտագործել է «նա» բառը կամ **Երեխայի անուն+հայրը** կապակցությունը (Վարազդատի հայրը, Շողիկի հայրը): Ինչ խոսք, այդ կերպ դիմելը բնորոշ, առանձնահատուկ է եղել աշխատավորական խավերին և ոչ թե թագավորական կամ իշխանական տներին, իշխող դասերին:

Հր.Աճառյանի այն հավաստումը, թե «Հայոց պատմության մեջ իգական անուն չկա», որի պատճառով էլ 19-րդ դարի կեսերին «ազատ ասպարեզ բացվեց բառակերտության և սկսեցին հորինել ամեն տեսակի իգական նորանոր անուններ»¹, ընդունելի է: Նա բերում է օրինակներ, որ հնում **Տիգրանուհի, Խոսրովիդուխտ, Սահականուշ** և նման կազմություն ունեցող անձնանուններն իրականում անձնանուններ չեն: Նշանակում են «Տիգրանի աղջիկը», «Խոսրովի աղջիկը», «Սահակի աղջիկը»: Հետաքրքիր է այն իրողությունը, որ եթե իգական անձնանուն

1. Աճառյան Հր., Հայոց անձնանունների բառարան, հատոր 5, Երևան, 1962, էջ 342:

կազմվում է միայն **դուխտ**-ը արական անձնանվան վրա ավելացնելով (Սանդուխտ, Վարդանդուխտ, Սահակադուխտ, Շահանդուխտ, Հայկանդուխտ), ապա **ուհի**-ով կազմվում են և՛ այդ կաղապարով (Հայկուհի, Համազասպուհի, Տաճատուհի, Արամուհի, Սմբատուհի, Արշակուհի), և՛ **ուհի**-ն տեղանուններին ավելացնելով (Վանուհի, Նաիրուհի): **Ուհի**-ով իգական սեռի անձնանուններ են ձևավորվում նաև ածականներից (Սրբուհի, Գեղուհի, Մաքրուհի) և հասարակ գոյականներից (Գառնուհի, Երագուհի, Ըղծուհի, Բերկրուհի): Այսօր զգալիորեն տարածված են **հայրանուն+անուշ**, **հասարակ գոյական**, **ածական+անուշ** բաղադրիչներով կազմված իգական անձնանունները (Սմբատանուշ, Խաչանուշ, Պերճանուշ, Լուսանուշ, Ջովանուշ, Գեղանուշ, Նորանուշ, Թուխանուշ): **Ուհի** և **անուշ** բաղադրիչներով կազմությունները, **դուխտ**-ի համեմատությամբ, որոշակի կենսունակություն, հետևաբար և ավելի ծավալվելու միտում ունեն: Երբեմն միևնույն հայրանունով և **դուխտ**, **ուհի**, **անուշ** բաղադրիչներով կերտվում են իգական անձնանուններ.ա) Վարդանդուխտ, Վարդանուշ, Վարդանուհի, բ) Խոսրովադուխտ, Խոսրովանուշ, Խոսրովուհի, գ) Հայկանդուխտ, Հայկանուշ, Հայկուհի:

Որ հայ ժողովրդի պատմության մեջ իգական անձնանուններ եղել են, վկայում են Հր. Աճառյանի հիմնգիտորյա բառարանը և Գ.Ստեփանյանի «Կենսագրական բառարանը» (երեք հատորով):

Գ.Ստեփանյանի եռահատոր բառարանում կարդում ենք հայ մշակույթի նշանավոր գործիչների համառոտ կենսագրությունները և իմանում, որ նրանցից իգական սեռի շատ ներկայացուցիչներ ապրել ու գործել են մինչև 19-դարը: Թվենք մի քանիսը՝ Խոսրովիդուխտ (8-րդ դար, հայ առաջին բանաստեղծուհի), Թագուհի (9-րդ դար, գրչագիր), Խաթուն (12-րդ դար, մանրանկարիչ), Աննա (18-րդ դար, մատենագիր), Լուսնյակ, Մարգարիտ, Աստղիկ, Քեթևան, Մարիամ, Աղավնի, Նինա, Սոփիա, Մարի, Արաքսի, Սաթենիկ, Թերեզա, Տիրուհի(դերասանուհիներ, երգչուհիներ):

«Սասունցի Դավիթ» էպոսի Ծովինար,Արմաղան, Խանդուբ, Դեղծուն, Գոհար անունները ևս վկայում են, որ դարեր առաջ իգական սեռի ներկայացուցիչների անունները չեն սահմանափակվել միայն «այսինչի աղջիկը», «այսինչի դուստրը» ձևերով:

Աղաջան տոհմածառով դարձյալ հաստատվում է, որ արդի շրջանում կենսունակ իգական անուններից շատերը գալիս են վաղնջական

ժամանակներից: Դրանք երկար ու ծիզ դարերի ընթացքում կա՛մ վերակենդանացել են, կա՛մ շարունակաբար գործածվել: Այսպես՝ Անահիտ, Աստղիկ, Նվարդ, Սաթենիկ, Եպրաքսյա, Զարուհի, Հասմիկ (անհիշելի ժամանակներից), Աննա (1-ին դար), Մարան (4-րդ դար), Վարդանուշ, Վարդուհի (5-րդ դար), Արուսյակ, Սեդա (9-րդ դար), Թամար (10-րդ դար) Գոհար, Շողիկ, Ցողիկ, Թամամ (12-13-րդ դարեր), Թուխժամ (միջին դարեր), Պրաքսի (15-րդ դար), Հնազանդ (14-17-րդ դարեր), Վարդիթեր (16-րդ դար), Մայրանուշ (19-րդ դար):

Այսպիսով՝ հայկական ընտանիքներում իգական անվանադրությունն ունի դարերի պատմություն: Անունների զգալի մասը արդիական է: Իգական անձնանունները հիմնականում դրանք կրողների մայրերի, տատերի անուններն են և, անշուշտ, գործածվել են նաև նշված ժամանակահատվածից էլ առաջ:

Իգական այն անձնանունները ևս, որոնք հայերենով չեն ստուգաբանվում, գալիս են օտար լեզուներից, ուր ունեն իրենց ստուգաբանությունը:

Աղաջան գերդաստանի առաջին սերունդների իգական անձնանունների մեջ սակավաթիվ են փոխառությունները, որոնք, դժբախտաբար, հախուռն կերպով մեծ ծավալ են ստացել՝ սկսած դարիս 30-40-ական թվականներից, խորհրդային ժամանակներում:

Աղաջան տոհմամատյանում կան հունական (Եպրաքսյա, Պրաքսի, Զրիստինե, Սառա), լատինական (Դիանա, Էմմա, Ռիմա, Ռիտա, Ռոզա), պահլավական-պարսկական (Անուշ, Զարուհի, Լալա, Նվարդ, Սարե), եբրայական կամ հրեական (Թամար, Մարիետա), արաբական (Թամամ, Յազգյուլ, Նուռա, Սեդա), եվրոպական (Ամալյա, Ալա, Հերմինե), ռուսական (Ալվինա, Աննա, Ժենյա, Լենա, Կիմա, Սվետլանա, Տանյա): Մեծ թիվ են կազմում բուն հայկական ու հայ ժողովրդական (Ազգանուշ, Ազնիվ, Արեգնազ, Անի, Արաքսի, Արուսյակ, Արփենիկ, Գեղեցիկ, Գոհար(իկ), Թուխժամ, Հայկանուշ, Հասմիկ, Հնազանդ, Մայրանուշ, Մարան, Շողիկ, Սաթենիկ, Սիրանուշ, Վարդիշադ, Վարդեր, Վարդիթեր, Վարդուհի, Վարդուշ, Ցողիկ, Փայլուն, Փայլիկ, Քաղցրիկ, Քնարիկ), ինչպես նաև նորահնար, նորահայտ (Լիլիթ, Արմինե, Հայաստան, Նարինե, Սարինե) անձնանունները:

Աղաջան «ազգի» և՛ արական, և՛ իգական անձնանունների վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ տարբեր լեզուներից փոխառնված անձնանունները առհավատչյան են տվյալ լեզուները կրող

հզոր պետությունների դարավոր տիրապետության, մասնաճյուղի, որ հայ ժողովուրդը, հույն, հրեա, պարսիկ, արաբ և այլ ժողովուրդներ գտնվել են սոցիալ-տնտեսական, կենցաղային ու մշակութային փոխազդեցության մեջ: Ինչպես հայոց լեզվի բառապաշարը հարուստ է փոխառյալ, օտար բառերով, և գիտենք այդ երևույթի պատճառը, այնպես էլ հայոց անձնանունների ստվար ցանկում զգալի են օտար, ոչ հայկական անձնանունները:

Նշված շատ անձնանուններ ժողովրդական են, հայկական: Նաև հիշյալ անուններին է վերաբերում Զր. Աճառյանի խոսքը. «Հայ հասարակ ժողովրդի, շինականի բնիկ, հարազատ, յուրակերտ անուններն են սրանք, որ եկեղեցական դասի պաշտած կրոնական անունների և ազնվական դասակարգի սիրած օտար անունների շրջանակում բացառիկ փայլով ցույց են տալիս»²:

Ահա Աղաջան «ազգի» իգական անձնանունները՝ ծագման ու իմաստային բացատրություններով, որոնք քաղված են Զր. Աճառյանի հայտնի բառարանից և Կ. Դուրգարյանի «Անվանագրքից»³: Տրված են մի քանիսի տերերի կենսագրական շատ հակիրճ տվյալներ, որոնց մի մասը հպանցիկ ակնարկ է 20-րդ դարի առաջին տասնամյակների Մաստարայի քաղաքական վիճակի մասին:

1. ԱԶԳԱՆՈՒՇ (ԱԶԳՈՒՇ) - Նորակերտ անուն է՝ կազմված հայերեն **ազգ** բառից (Հայկանուշ, Վասկանուշ անունների նմանությամբ):
Կրճատ՝ **Ազգուշ**:

2. ԱԶՆԻՎ - Հայերեն **ազնիվ** ածականից:

3. ԱԼԱ-ԱԼԻՍԱ անվան փաղաքշական: Եկել է ռուսերեն **Алиса** անունից: Գործածական է մասնաճյուղի **Ալիս** ձևով:

4. ԱԼՎԻՆԱ - Ռուսերեն Ալբինա (Альбина) անունից, որ նշանակում է «շիկահեր», «սպիտակադեմ»: Ծագել է լատիներեն «սպիտակ» բառից:

5. ԱՄԱԼՅԱ - Եվրոպական անուն է, որ գործածական է դարձել մեզանում անցյալ դարի 80-ական թվականներից: Շիլլերի «Ավագակները» ողբերգության հերոսուհու անունով: Աղաջանի թոռան Լևոնի հարսն է, Մյասնիկի կինը (Արեգ գյուղից): Ուսուցչուհի է Մաստարայի դպրոցում: Ունի տղա, աղջիկ, թոռներ:

2. Աճառյան Զր., Հայոց անձնանունների բառարան, հատոր 5, Երևան, 1962, էջ 351-352:

6.ԱՆԱՅԻՏ - Պահլավերեն նշանակում է «անբիծ, անապական, անարատ»: (Կազմված է **an**-ժխտական ածանցից և «պիղծ, կեղտոտ» բառից): Աղաջանի թոռն է՝ Խաչատուրի աղջիկը:

7.ԱՆԻ-Նորահայտ անուն է, քաղաքամայր Անիի անունից: Արմենակի թոռն է, ունի երկու տղա, մեկ աղջիկ: Ապրում է Դիլիջանում:

8.ԱՆՆԱ- Բուն նշանակությունն է «շնորհ», «գթություն», «շնորհալի», «ողորմած», «ողորմասիրտ», «պարզևատու»: Ունի փաղաքշական **ԱՆՆԻԿ** ձևը: Գործածական է նաև ռուսական **ԱՆԻՅԿԱ** ձևով:

9.ԱՆՈՒՇ- Պահլավերեն «ամմահ» բառից, որ հետո իմաստի փոփոխությամբ դարձել է «քաղցր», «հաճելի»:

10.ԱՍՏՂԻԿ- Հայերեն **աստղ բառից** -իկ փաղաքշական ածանցով: **Ստելլա** անունը, որ հնում չի հիշատակվում, լատիներեն նշանակում է «աստղ» և համապատասխանում է մեր «Աստղիկին»: «Սասնա ծռեր» հայ ժողովրդական վեպում **Աստղիկ** տղամարդու անուն է: Աստղիկը Աղաջանի թոռան Հայկի կինն է: Տասը երեխաներ է մեծացրել: **Աղաջան** գերդաստանի պատմության մեջ ոչ մի մայր այդքան երեխաներ չի ունեցել: Ութսունն անց է, գյուղից՝ Մաստարայից տեղափոխվել է ընտանիքով 1948թ., ապրում է մայրաքաղաքում:

11.ԱՐԱՔՍԻ- Հայաստանի մայր գետի՝ Երասխի եվրոպական ձևից, որ փաստորեն սեռական հոլովն է, նշանակում է «Արաքսի դուստր»: Հանդիպում է նաև **Արաքսյա** ձևով: Աղաջանի թոռն է, Փիլիպոսի աղջիկը:

12.ԱՐԵԳՆԱԶԱՆ - Հայերեն «արեգ», «արև»+նազ, նազանք» բառերից: Հանդիպում է նաև **Արեգնազ**, **Արեգ**, **Արեգո** ձևերով: Աղաջանի թոռը Խաչատուրի աղջիկը, Հայկի քույրը: Վերին շրթունքից մինչև աջ կողմի քունքը դրոշմված կես սանտիմետր լայնությամբ սպին, որ մասամբ աղարտել էր նրա գեղեցկությունը, միշտ հիշեցրել է 1918 թվականը: Թուրքական խուժանը լցվել է գյուղ, սկսել թալանն ու կոտորածը: Գեղեցիկ հարս ու աղջիկ որոնող ասկյարներից փրկվելու համար նրանք թաքնվել են, քուրջեր հագել, դեմքերին թրիք քսել: Արմախում մի ասկյար մահանի մուք անկյունից հանել է Արեգնազին և, տեսնելով դեմքը, թքոտել է ու բավարարվել յաթաղանի հարվածով: Մահացել է 1950 -ական թվականների վերջերին, Երևանում:

13.ԱՐՄԱՆՈՒՇ- Նորակերտ անուն, որ կազմվել է արևմտահայերի մեջ **Արմեն+անուշ**, իբր «դուստր Արմենի»: Կ. Դուրգարյանի բացատրությունը այլ է՝ Արամ+անուշ՝ «Արամի դուստր»: Արմենակի թոռը, ունի

երկու զավակ, ապրում է Վանաձորում:

14. ԱՐՄԻՆԵ- Նորահնար անուն, որ անցյալ դարում կազմվեց **Արմեն** անունից, այժմ շատ գործածական **-ինե** վերջնամասնիկով (Կարինե, Զարինե, Վերգինե, Եվգինե, Ադրինե և այլ իգական անունների ձևով): Արմենակի թոռ. ունի երկու երեխա, (աղջիկ, տղա), ապրում է Վանաձորում:

15.ԱՐՈՒՍՅԱԿ - **Արուսյակ** մուրաբի անունը, որ նույն **Լուսաստղն է՝ Վեներան**: Կրճատ ձևն է **Արուս**: Աղաջանի թոռ Արմենակի կինն է: Թունոյ (Թովմասի) թոռ Արուսյակ, հայրը՝ Խաչատուր: Մանկությունից դառնալի օրեր է տեսել: Որք է մեծացել: 1918թ. «փախեփախին» երկու քույրերի հետ թափառել է Աղավնատուն գյուղի շրջակայքում (Էջմիածին): Սովից մահացել են քույրերը, ինքը փրկվել է: Ընտանիք է կազմել, բայց միշտ մոկտացել է գերեզման չունեցող քույրերի համար: 1937թ. մահացել է քույրերի վիշտը ամոքող միակ աղջիկը՝ յոթամյա Սիրանուշը (Սիրիկը): Ավագ որդին՝ Վարազդատը, 19 տարեկան հասակում զոհվել է 1941-1945թթ. պատերազմում: Մինչև մահ (1973թ.) ողբացել է նվիրական կորուստները (ամուսինը՝ Արմենակը մահացել է 1954թ.): Ապրել է գյուղում, գյուղատնտեսական աշխատանքներից բացի դերձակություն է արել, պատերազմի տարիներին զնել է կարպետ, ջեջիմ, կտավ գործելու սարք տորք, հինել- գործել է: Դրա և այգու եկամուտով ընտանիքը փրկել է սովից: Երկու տղաներից մեկը դասախոս է, մյուսը՝ ուսուցիչ:

16. ԱՐՓԵՆԻԿ - Զայերեն **արփի** «արև» բառից: Կան սրա փաղաքշական ձևերը՝ **Արփիկ, Արփին, Արփո**: Աղաջանի թոռ Մելիքի մեծ հարսն է Զայկազի կինը: Նրա համար է ասվել՝ **ծեռքս բան, ոտքս՝ գերեզման**: Ժրաջան այս կինը տարել է ընտանիքի հոգսերը, տասնյակ տարիներ խնամել պատերազմի վերքերից տառապող ամուսնուն: 1950-ական թվականներին տեղափոխվել են Էջմիածնի Բաղրամյան ավանը: Մեծացրել ու դաստիարակել է ութ զավակներ: Մահացել է 1983 թվականին:

17. ԳԵՂԵՑԻԿ - Զայերեն **գեղեցիկ** ածականից ստեղծված անուն:

18. ԳՈՅԱՐԻԿ - Զայերեն **Գոհար** անունն է - **իկ** փաղաքշական ածանցով:

19. ԳՈՅԱՐ - Զայերեն **գոհար** «ակունք» («աղամանդ», «անգին քար») բառից, որ թեև պարսկերեն է, բայց շատ վաղուց հայացած: Վերջին շրջանում հանդիպում ենք **Գոհարինե** - **ինե** իգական ածանցով հնարած անվանը, որը միանգամայն ավելորդ է, քանզի **Գոհար** անունը

միայն իգական է եղել:

20. ԴԻԱՆԱ- Լատիներեն **Դիանա** - ից: Ստուգաբանում են «անմերձե-
նալի»: Մխալ է **Դիաննա** ձևը:

21. ԵՊՐԱՔԱՅԱ- Հունարեն նշանակում է «հաջողություն», «բարեբախ-
տություն», «բարի վարմունք» (կազմված է լավ+գործիք, վարմունք բա-
ռերից): Հնագույն ժամանակներից գործածական է հայերի մեջ
Եվպարաքսե, Եպարաքսի, Եպարաքսյա, Պարաքսի, Պարաք (Պրաք) ձևե-
րով: Կա նաև աղճատված **Եպո** անունը: Աղաջանի թոռ Մելիքի մյուս
հարսն է (Արամայիսի կինը): Մինչև 1950թ. ապրել է Մաստարայում:
Այժմ ապրում է Էջմիածնի Նորակերտ ավանում: Տնային տնտեսուհի է,
դաստիարակել է հինգ երեխաների:

22. ԶԱՐԻԿ- **Զարուհի** անվան փաղաքշական ձևն է, որ հաճախ գոր-
ծածվում է իբրև ինքնուրույն անուն: Արմենակի թոռն է: Կրում է իր տատի
քրոջ անունը: Ունի երեք երեխա, ապրում է Երևանում:

23. ԶԱՐՈՒՀԻ- Պարսկերեն «ոսկի» բառից + **ուհի** իգականակերտ
ածանցով: Կրճատ և փաղաքշական ձևերն են **Զարո, Զարուկ**: Ոմանք
գործածում են **Զարա** ձևը, որտեղ **ա** մասնիկը փոխարինում է **-ուհի**
ածանցին:

24. ԵՍՄԱ- Լատիներեն բառ է «թանկագին», «խորհրդավոր» նշանա-
կությամբ: Եկել է գեղարվեստական գրականության միջոցով (Մանտե-
գացցայի «Հիվանդ սեր» վեպի հերոսուհու անունն է):

25. ԹԱՄԱՄ- արաբերեն «լիվ», «կատարյալ»: Աղաջանի որդի Փիլի-
պոսի կինը (ծնվ. 1857թ.): Ամուսնուն կորցնելուց հետո (ենիչերիների
խաբեության զոհերից, 1918թ.) երեսուն տարի ապրել է հայրենի գյու-
ղում Մաստարայում: Ունեցել է վեց զավակ, որոնց բազմամղած ըն-
տանիքներով կտրուկ մեծացել, բազմաճյուղ է դարձել Աղաջան տոհ-
մածառը: Ապրում էր փոքր տղայի Լևոնի հետ: Ութսունն անց տարիքում
էլ, երբ գերդաստանի քավորի 15-16 տարեկան տղան էր գալիս, ան-
միջապես ելնում էր տեղից, հարսնություն էր անում: «Պլինկներով կո-
տը» գլխին, սևազգեստ, սև շալով գլուխն ու դեմքը փաթաթած, բերանը
շալի ծայրով ծածկած, լուռ ու անաղմուկ մշտապես զբաղվում էր թոնիր
վառելով, հաց թխելով, դաշտում աշխատողների համար համով- հոտով
ճաշ պատրաստելով, տուն ու տեղը կարգի բերելով: Մահացել է 91
տարեկան հասակում 1948թ: Նա Աղաջան տոհմածառի երկրորդ
սերնդի վերջին ներկայացուցիչն էր:

26. ԹԱՄԱՐ- Եբրայերեն անուն, որ նշանակում է «արմավենի»:

27. ԹՈՒԽԾԱՍ- Հայերեն **թուխ և ծամ** բառերից, որ նշանակում է «սևահեր», «սևամազ», «թխամազ»: Աղաջանի թոռան Մելիքի հարսը (Գառնիկի կինը): Ունեցել է երկու աղջիկ: Մահացել է 1952թ.:

28. ԺԱՆՆԱ-Ֆրանսերեն անուն է, որ տարածված է նաև ռուսների մեջ, համապատասխանում է մեր **Օհաննա** (Յովհաննա) անվան:

29. ԺԵՆՅԱ- Ռուսերեն **ժենյա** անունից, որ **Евения** անվան զգվականն է: Կրկնակի փաղաքշական է **ժենիկ** ձևը: Ծագում է հունարեն **եվգինե** անունից, որ նշանակում է «բարեծնունդ, այն է՝ ազնվատոհմ, ազնվական», «լավ» + «ծնունդ» բառերից: Աղաջանի թոռան Արմենակի հարսն է: Բարձրագույն կրթությամբ աշխատել է հայրենի Հացաշենի (Սաբունջի) և Մաստարայի դպրոցներում: Ընտանիքը 1970 թվականից տեղափոխվել է Կիրովական (Վանաձոր): Անպատմելի նեղություններ է կրել, ունեցել է ընտանեկան և ուսուցչական բազում հոգսեր: Տունուտեղի տեր է դարձել իր աշխատասիրության ու համառության շնորհիվ, կազմել օրինակելի ընտանիք, մեծացրել երեք տղա, չորս աղջիկ: Ունի տասներկու թոռ: Թեև անցել է ծերունական հանգստի, բայց «քիթ սրբելու ժամանակ չունի», մտահոգված է բոլորով:

30. ԼԱԼԱ- Պարսկերեն ծաղկի անուն է, որ մեզանում գործածվում է իբրև հայերեն **կակաչ** բառի բարբառային համազոր ձևը:

31. ԼԵՆԱ- Ռուսերեն **լեննա** անունից, որ համապատասխանում է մեր Հեղինեին: Լեննա անունը բոլորովին կապ չունի Սիբիրի մեծ գետի՝ Լեննայի անվան հետ: (Հեղինե նշանակում է «նվիրական կողով, որ գեղեցիկ ծաղիկներով զարդարելով նվիրում էին Արտեմիս աստվածուհուն»)՝ Փաղաքշական ձևն է **Հեղուշ**:

32. ԼԻԼԻԹ- Նորահայտ անուն է: Եկել է Ավ. Իսահակյանի համանուն լեզենդից: Ըստ հրեից առասպելի՝ Լիլիթ է կոչվել առաջին կինը, որին աստված ստեղծել էր «վեր բարձրացող բոցից»:

33. ԿԱՐԻՆԵ-Կազմված է հունալատինական հնչման ձևափոխությամբ: Ընդունվել է իբրև անկախ անուն՝ ազդվելով անշուշտ **Կարին** քաղաքի անվան պատահական նմանությունից: Արմենակի թոռան՝ Փիլիպոսի կինը: Ունի տղա և աղջիկ:

34. ԿԻՄԱ- Ռուսերեն Կիմ (коммунистический интернационал молодежи) արական անվան իզականն է:

35. ՀԱՅԱՍՏԱՆ- Նորակերտ անուն է մեր երկրի անունից: Արևմտահայերեն այս անունով կոչում են տղաներին, իսկ արևելահայերը՝ աղջիկներին: Աղաջանի թոռն է Փիլիպոսի աղջիկը: Ամուսնացել էր Չորնկա-

պում (Մարալիկ): Մշտապես կապված էր «հորանց» տան հետ: Տղան զոհվել էր Հայրենական պատերազմում: Աղջկա՝ Մարուսի վաղաժամ մահը իրեն գերեզման իջեցրեց (1984թ.):

36. ՀԱՅԿԱՆՈՒՇ- Հայերեն **Հայկ** անունից և **անուշ** բառից, որ «աղջիկ» նշանակություն ունի: Փաղաքական ձևերն են՝ **Հայկուշ, Հայկան, Կանուշ**: Աղաջանի աղջիկը: Հարս է եղել Մաստարայի տերտերին: 1918թ. թուրքերը առևանգել են: Պատմել են, որ այդ ողբերգությունից հետո նա ամեն անգամ մոտեցել է Արփաչայի ափին, կանչել հարազատներին, որ իրեն ազատեն: Ինչպե՞ս է ապրել, ե՞րբ է մահացել, ժառանգ ունեցե՞լ է թուրք ամուսնուց, անհայտ է:

37. ՀԱՍՄԻԿ- Հայերեն **հասմիկ** ծաղկի անունից:

38. ՀԵՐՄԻՆԵ- ֆրանսերեն **Հերմինե** անունից: Բուն ծագումը հունարեն **Երմոնե** անունից, որ կապվում է «Հերմես» աստծու անվան հետ: **Երմոնեն-ն Հերմես-ի** իգականն է:

39. ՀԱՍՁԱՆԴ- Հայերեն **հնազանդ** բառից, նշանակում է «ենթարկվող»: Փաղաքական ձևն է **Հնո**: Աղաջանի թոռան Արտաշեսի կինը: Երկու տղա է ունեցել (Եսայի, Գուրգեն): Մահացել է 1912թ.:

40. ՀԱԶԳՈՒԼ- Արաբերեն «ընտիր» և պարսկերեն «վարդ» բառերից: Նշանակում է «ընտիր վարդ»: Աղաջանի թոռան Մելիքի կինը (երկրորդ): Աղաջանների մեծ ու փոքրին սիրում էր «ազին», հոգատար էր բոլորի նկատմամբ, բայց կյանքի վերջին տարիներին շատերի կողմից մոռացվեց: Կիսացնորված վիճակում մահացել է 1952թ. 92 տարեկան հասակում:

41. ՄԱՅՐԱՆՈՒՇ- Հայերեն **մայր** բառից իբրև «անուշիկ մայր», «սիրելի մայր»: Փաղաքական ձևն է **Մարուշ**, կրճատը՝ **Մարան**:

42. ՄԱՐԻԵՏԱ- Եվրոպական անուն է, որ կազմված է եբրայերեն **Մարիամ** անունից՝ զեռ իգական ածանցով: Արմենակի թոռան Վարազդատի կինը, ունի չորս երեխա:

43. ՄԱՐԱՆ-Հայերեն **Մայրանուշ** անվան կրճատ ձևն է: Աղաջանի հարսն է Գևորգի կինը: Մարանի շորերը գողանում են: Զրպարտում են Փիլիպոսի հարսին Արուսին: Գողացողը իսկական գողը բռնվում է Գյումրիում գողոնը վաճառելիս: Մինչ այդ Արուսը եկեղեցում ավետարանով երգվում էր, որ ինքը անմեղ է , բայց ոչ ոք չէր լսում, չէր հավատում:

44. ՆԱՆԵ- Արամազդի երկրորդ դուստրը, Անահիտի և Միհրի քույրը: Հայոց հեթանոսական կրոնում իմաստության, ողջախոհության աստ-

վածուհին, մայրության և տան օջախի պահապանը: Հայ ժողովուրդը մինչև այժմ մեծ մորը տատին, **ճանե** է ասում: Աղաջանի հարսն է՝ **խաջատուրի** կինը:

45. **ՆԱՐԻՆԵ**- Նորահնար անուն: Կազմված է **-ինե** ածանցով: **Նար** արմատը մեր լեզվում երկու ծագում ունի՝ պարսկական և արաբական: Պարսկերեն նշանակում է «նուռ», իսկ արաբերեն «կրակ», «հրեղեն»:

46. **ՆԵԼԼԻ**- Եվրոպական անձնանուն է, եկել է գրականության միջոցով:

47. **ՆՎԱՐԴ**- Պարսկերեն բառ է, ոմաք մեկնում են «սիրելի, հաճելի, ընծա, պարզ»: Աճառյանը համարում է բարդ բառ՝ կազմված պարսկերեն «նոր» և «վարդ» բառերից, իբրև «նորավարդ, նորածիլ նորաբաց վարդ»: Աղաջանի թոռան Մելիքի փոքր տղայի Վազգենի կինը: Մաստարայում ապրող էլոների մեծ ու պատվավոր գերդաստանից էր, Աղաջանյանների լավագույն հարսներից: Մահացել է երիտասարդ տարիքում (45-46 տարեկան), շաքարախտից 1978 թվականին:

48. **ՆՈՒՌԱ**- Արաբերեն **նուրա** նշանակում է «լույս», **նուրի**՝ «լուսավոր»:

49. **ՇՈՂԻԿ**- Հայերեն **շող** բառից – իկ փաղաքշականով: Համարվում է մերթ առանձին անուն և մերթ **Շողակաթ** (հայերեն շող+ կաթել բառերից) ակնարկությամբ համանուն տաճարի:

50. **ՊՐԱՔՍԻ**- **Եպրաքսյա** բառի ձևերից է: Կազմված է հունարեն «լավ+գործիք, վարմունք» բառերից՝ «բարեբախտություն, հաջողություն, բարի վարմունք» նշանակությամբ: Աղաջանի թոռ Մելիքի աղջիկը:

51. **ՋԵՄՄԱ** -Եվրոպական նորամուտ անուն է, որ հայերենի մեջ տարածվել է 20- ական թվականներից գրականության միջոցով:

52. **ՌԻՄԱ**- Լատիներեն Ռոմա (Հռոմ) քաղաքի անունից, որ հայերենի մեջ տարածված է իբրև անձնանուն **Հռոմ, Հռոմսիմե** ձևերով: Այսօրվա գործածական **Ռիմա** անունը գալիս է ռուսերեն **Римма** իգական անունից, որ նշանակում է «գեղեցկուհի», «դուրեկան»:

53. **ՌԻՏԱ**- Լատիներեն **Մարգարիտա** անվան փաղաքշական ձևն է:

54. **ՌՈՉԱ**- Լատիներեն և ռուսերեն **Ռոզա** անունից՝ «վարդ» նշանակությամբ: Համապատասխանում է հայերեն **Վարդ, Վարդուհի, Վարդիկ** անձնանուններին: Փաղաքշական ձևերն են **Ռոզիկ, Ռոզալիա**:

55. **ՍԱԹԵՆԻԿ**- Հայերեն **սաթ** բառից -**ենիկ** մասնիկով (ինչպես **Վարսենիկ, Արփենիկ** անունները): Ռուսերեն **Янтар**, պարսկերեն **քեիրի-բար**: Կրճատ ձևերն են **Սաթեն, Սաթո, Սաթիկ, Սաթին**: Աղաջանի թոռը Փիլիպոսի աղջիկը (վաղամեռիկ): Այդ անունն էր կրում Փի-

լիպոսի թոռը Լևոնի աղջիկը (մահ. է 1996թ.):

56. ՍԱՌԱ- Հունարեն նշանակում է «իշխանուհի», ծագում է եբրայերեն «իշխել, թագավորել» բառից:

57. ՍԱՐԵ- Հավանաբար **Սարա** անունն է, որ նշանակում է «տիկին» կամ «երգ»: Ենթադրվում է նաև, որ **Ջարե** անունն է՝ ծայնեղ գ-ի խլացմամբ: **Ջարե** պարսկական «ոսկի» բառից, տարածված իգական անուն է քրդերի մեջ: Աղաջանի թոռ Լևոնի կինը: Հարազատների հետ 1915թ. գաղթել է Արևմտահայաստանից: Կորցրել է ավագ որդուն 1941-45թթ. պատերազմի պատճառով: Աշխատել է Մաստարայի կոլտնտեսությունում, սովխոզի հավաքուծական ֆերմայում: Մեծացրել ու դաստիարակել է ութ զավակ: Մահացել է 1966թ. 71 տարեկան հասակում:

58. ՍԱՐԻՆԵ- Հավանաբար թուրքերեն **Սարի** բառից է, որ նշանակում է «ղեղին»: **Սարինե** նորաստեղծ անուն է՝ կազմված «սար» (պարսկերեն «գլուխ») բառից -**ինե** վերջածանցով:

59. ՍԵՂԱ- Ածառյանը ենթադրում է արաբերեն «տեր» բառի իգական «տիրուհի» բառից, որի արականը լինում է Սայտ դի («տեր իմ»):

60. ՍԻՐԱՆՈՒՇ- Հայերեն **սեր** (սեր) բառից - **անուշ** իգական վերջածանցով (ինչպես **Վարդանուշ**, **Հրանուշ**): Փաղաքշական ձևերն են **Սիրան**, **Սիրուշ**, **Սիրիկ**: Արմենակի աղջիկը, վաղամեռիկ (1930- 1937): Տես **Արյուսակ** անունը:

61. ՍՎԵՏԼԱՆԱ- Ռուսերեն **Светлана** անունն է, որ կազմված է ռուսական հնագույն անունների ձևով (**светла она**) և նշանակում է «լուսավոր», «մաքուր», «պայծառ»: Փաղաքշական ձևերն են **Սվետիկ**, **Սվետա**:

62. ՎԱՐԴԵՐ- Արական և իգական անձնանուն: **Վարդ** բառի հոգնակին, բայց թերևս նաև արականում **Վարդերես** անունից կրճատված և իգականում **Վարդիթեր** անունից կրճատված: **Վարդ և երես** բառերից՝ իբրև «կարմրաթուշ», «վարդի պես կարմիր այտեր ունեցող»: Տարածվել է «Լուսերեսն ու Վարդերեսը» հեքիաթից: Աղաջանի թոռան՝ Արմենակի հարսը, Թադևոսի կինը: Մահացել է 1946թ.:

63. ՎԱՐԴԻԹԵՐ- Հայերեն **վարդ և թեր** (պսակաթերթիկ) բառերից **վարդի թերթ**: Տարածվել է Պ. Պռոշյանի «Սոս և Վարդիթեր» վեպի ազդեցությամբ:

64. ՎԱՐԴԻՇԱՂ-Հայերեն վարդ+շաղ բառերից, իբր վարդի թերթից կաթած ցող: Աղաջանի անդրանիկ թոռան՝ Մելիքի կինը: Ունեցել է յոթ երեխա: Մահացել է 1929թ., երբ փոքրը եղել է 2-3 տարեկան:

65. ՎԱՐԴՈՒՅԻ - Հայերեն **վարդ** բառից –**ուհի** իգականակերտ մասնիկով (համապատասխանում է ռուսերեն **Роза** անվան): Կրճատ ձևն է **Վարդուշ**:

66. ՎԱՐԴՈՒՇ - **Վարդուհի** անվան կրճատ ձևը, **Վարդանուշի** փաղաքշականը: **Վարդանուշը** առաջացել է **Վարդան** անունից և -**անուշ** վերջածանցից:

67. ՏԱՆՅԱ-Ռուսերեն **Տատյանա** անձնանունն է, որ տարածվել է Պուշկինի «Եվգենի Օնեգինի» ազդեցությամբ: Հունարեն նշանակում է «հիմնադիր», «կազմակերպիչ»:

68. ՑՈՂԻԿ - Հայերեն **ցող** (շաղ) բառից «ցողի պես մաքուր», «հստակ, թափանցիկ» իմաստով:

69. ՓԱՅԼՈՒՆ - Հայերեն **փայլուն** ածականից, որ գործածվում է որպես իգական անձնանուն (համազոր է **Փայլակ** արական անվան): Կրճատ ձևն է **Փայլիկ**: Աղաջանի թռռան Արմենակի հարսը, Հմայակի (Գրիշայի) կինը: Ունի երկու տղա: Փեշակի տեր է որակյալ դերձակուհի:

70. ՔԱՂՑՐԻԿ - Հայերեն **քաղցր** բառից -**իկ** փաղաքշական ածանցով «քաղցր», «հաճելի» իմաստով: Աղաջանի թռռան Մելիքի հարսը (Գառնիկի 2-րդ կինը): Կարմրաշենից է, ապրում է ջնհիածնում: Ունի յոթ երեխա: Նույն անունով է Աղաջանի մյուս թռռան Լևոնի հարսը (Ռազմիկի կինը): Ժրաջան, տնարար կին էր: Մեծացրել է վեց երեխա: Հանկարծամահ է եղել 1988թ. դեկտեմբերի 12-ին:

71. ՔՆԱՐԻԿ - Հայերեն **քնար** («տավիղ» նվագելու լարային գործիք) բառից -**իկ** փաղաքշական ածանցով: Հանդիպում է նաև **Քնար** ձևով, որ նույնպես ինքնուրույն անձնանուն է:

72. ՔՐԻՍՏԻՆԵ - Հունարեն անուն, ռուսերեն Խրիստինա: **Քրիստափոր** անվան իգականն է: Христофор նշանակում է « Քրիստոսաբեր»:

ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

ա) **Աղաջան** տոհմածառի իգական անձնանունների ուսումնասիրությունը վկայում է, որ հասարակական կյանքի պատմական զարգացումը, սոցիալ-տնտեսական հարաբերությունները, գյուղական կենցաղն ու բարքերը իրենց հետքն են թողել անվանադրության վրա: Դրանում որոշակիորեն արտացոլվել է այն, թե անհատները հասարակական կյանքում, գերդաստանի ու ժողովրդի պատմության մեջ ի՞նչ ճակատագրական դեր են խաղացել, ի՞նչ հաղթական կռիվներ են մղել, ազգանպաստ գործեր կատարել, ինչպիսի՞ բարենասնություններ են

ունեցել: Հետագայում նորածիններին, որպես սիրո ու հարգանքի առ-
հավատչյա, նրանց հիշատակի հավերժացում, կոչել են սրտամոտ,
թանկագին անուններով:

բ) Իզական անձնանունների հայերենացումը մոտ երկդարյա ժամա-
նակահատվածում դրսևորվել է լայն ընդգրկումներով: Կերտվել են գեր-
դաստանի հայեցի անձնանուններ՝ 1) Քույսերի և ծաղիկների անուն-
ներից՝ ածանցմամբ կամ բառաբարդմամբ (Հասմիկ, Վարդեր, Վարդի-
թեր, Վարդուհի), 2) Երկնային մարմինների անուններից՝ ածանցման
և բարդացման միջոցով (Արեգնազան, Արփենիկ), 3) Թանկագին քա-
րերի անուններից (Գոհար, Գոհարիկ, Ջարիկ), 4) Բնության զանազան
երևույթներ անվանող առարկաների ու հմայիչ, ցանկալի հատկանիշ-
ների անուններից (Շողիկ, Ցողիկ, Քաղցրիկ, Փայլուն, Գեղեցիկ, Ազնիվ,
Հնազանդ):

գ) Տոհմածառի 5-րդ և 6-րդ սերունդների իզական անձնանուններն
աչքի են ընկնում եվրոպական և ռուսական ծագում ունեցողներով:
Օտարամոլությունը հիմնականում կապվել է պաշտոնյա համայնավար
ծնողների ու այլ հարազատների հոգեբանության հետ (Նելլի, Նարինե,
Քրիստինե, Ջեմմա, Էմմա, Կիմա, Ժաննա, Մարի՛նտա, Սվետլանա): Ազ-
գային արմատներին վերադառնալու միտումը, համազգային զարթոն-
քը, Հայաստանի ժողովրդական, իրավական պետության կայացումը
աստիճանաբար կասեցնելու են ոչ հայեցի անունների մուտքը հայ ըն-
տանիքներ: Անձնանունների հայերենացմամբ նախանձախնդիր պիտի
լինեն հայոց բոլոր գերդաստանները:

դ) Իզական անձնանուններից սովորաբար ազգանուններ չեն կերտ-
վում: **Աղաջան** տոհմածառից **Թամամ և Լալա** անուններով կարելի է
կազմել Թամամյան, Լալայան ազգանունները: Այդ երևույթը բնորոշ է
արական անձնանուններին՝ բացառությամբ ոչ հայկականների ու չհա-
յացվածների: (Հիշենք, որ ազգանուն չի կազմվում Գրիշա, Ժորա, Սեր-
գեյ, Պետյա, Վիտյա անուններից, անսովոր է նրանց վերջում **յան** մաս-
նիկի ավելացումը): Իսկ ո՞րն է իզական անձնանունով ազգանուն կազ-
մելու պատճառը: Եղել են հայրենանվեր, անձնագոհ, քաջարի կանայք,
որոնք նաև զենքով սատարել են համայնքին, գյուղին, ազգին: Եվ այդ-
պիսիք դարձել են տոհմի, «ազգի» ղեկավարներ, առաջնորդներ:
Նրանց անունները գործածել են հաջորդ սերունդները, որպես մակդիր:
Ե) Գերդաստանի ընտանիքների աղջիկների անունները տրվել են նո-
րածիններին ընտանիքների մեծերի կողմից: Այդ օրինաչափությունը

չէր կարող գործել ընտանիքների մայրերի նկատմամբ, քանի որ նրանք տվյալ գերդաստան են եկել աղջկական անուններով, որ ստացել են ուրիշ գերդաստանների ընտանիքներում: **Աղաջան** տոհմաձառի մայրեր են եղել կամ են՝ Նանե, Մարան, Թամամ, Վարդեր, Վարդիշաղ, Յագգյուլ, Արյուսակ, Սարե, Սաթենիկ, Արփենիկ, Եպրաքսյա, Քաղցրիկ, Նվարդ, Ժենյա, Ամալյա, Փայլուն, Սեդա, Ռոզա, Մարիետա, Կարինե և այլ անուններ, որոնց զգալի մասը օտար է:

գ) 1996թ. մոտավոր տվյալներով **Աղաջան** տոհմաձառի իգական անուններից 15-ը գործածվել են 2 անգամ, 4-ը՝ երեք անգամ, ընդամենը 95 անուն: 23-ը հանգուցյալ է, 72-ը՝ ողջ: Ապրողներից տարրական կրթություն ունի 5-ը, ոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ կրթություն՝ 16-ը: Բարձրագույն կրթություն ունեցողները (13) մանկավարժներ են և այլ բնագավառի աշխատողներ: Միայն մեկը ունի գիտական աստիճան: Արմենակի թողը՝ Ջարիկ Աղաջանյանը, բանասիրական գիտությունների թեկնածու է: 72-ից 38-ը մինչնախադպրոցական, նախադպրոցական և դպրոցական տարիքի աղջնակներ են: Կենսունակ է տոհմաձառը, զարգացող ու ծավալվող, ուստի և հարափոփոխ է այս վիճակագրությունը:

է) Արականների նման **Աղաջան** տոհմաձառի իգական այն անձնանուններն են երկարակյաց, կրկնվող, հաճախադեպ, որոնք սիրելի, ախորժելի են (Վարդանուշ, Սիրանուշ, Հնազանդ, Գեղեցիկ, Քաղցրիկ), կամ այդ հատկանիշների հետ միաժամանակ կարճ են, երկվանկանի (Ազնիվ, Անի, Շողիկ, Ցողիկ, Հասմիկ):

Հայաստանի Հանրապետության և Սփյուռքի հայ ընտանիքներում հարկ է արմատավորել նորածիններին հայեցի հրապուրիչ անուններով կնքելու ավանդաբար շարունակվող կարգը, որը և՛ հայասիրություն է, և՛ հայրենասիրություն:

უკანასკნელ სტატუსში (1828-1996)

ԱՂԱՋԱՆ ՏՈՇԱԾԱՆԸ (1828-1996)

**ԱՂԱՋԱՆՅԱՆ Խ.Ա.
ԱՂԱՋԱՆՅԱՆ Զ.Խ.**

ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱԿԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԲԱՌԱՐԱՆ

Խմբագիրներ՝ Մ. Բեժանյան, Զ. Պետրոսյան

Տպագրական 9.3/4 մամուլ: Շարվածքը՝ համակարգչային:
Տպագրությունը՝ օֆսեթ:
Տպագրվել է Վանաձորի «Վանատուր» ՍՊԸ տպարանում: